

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Օպամա Քանդեց Քուլայի Յետ Պատը

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաֆ Օպամա իր ընտրութեան առթիւ խոստացած էր վերափոխել Ամերիկան:

Ան իր պաշտօնավարման մօտ ութ տարիներու ընթացքին բազմաթիւ յանդուգն քայլերու ղեկավարութեամբ իրագործել իր նպատակներու մեծ մասը, հակառակ իր ընդդիմախօսներու ջանքերուն, որոնք ամէն քայլափոխի փորձեցին կասեցնել Օպամայի ծրագրերը՝ ներքին եւ արտաքին մակարդակներու վրայ:

Անցնող Կիրակի օրը, Միացեալ Նահանգներու նախագահը ոտք կոխեց Գուայական հողին վրայ՝ ֆանդելով արհեստական այն պատը, որ հաստատուած էր երկու երկիրներուն միջեւ, աւելի քան յիսուն տարիներէ ի վեր:

1959 թուականին Ֆիտլի Բասթրոյի եւ Չէ Կէվարայի ղեկավարութեամբ ժողովրդային յեղափոխութիւնը կարողացաւ տապալել Միացեալ Նահանգներու աջակցութիւնը վայլող Պաթիսթայի բռնապետական կառավարութիւնը:

Ամերիկան չհանդուրժելով իր ցամաքէն 90 միլիոն հեռաւորութեան վրայ գտնուող փոքր կղզիին վրայ իրեն ոչ հաւատարիմ վարչակարգի մը ներկայութիւնը, փորձեց զինուորական միջոցներով տապալել նոր իշխանութիւնը: Այդ քայլերը ձախողութեան մատուցելէ ետք, Գուայայի շուրջ հաստատուեցաւ տնտեսական շրջափակում, Գասթրոն մարդոջութեամբ նետելով Խորհրդային Միութեան գիրկը:

Անկէ առիւն, Գուայայի հարցը մնայուն ներկայութիւն եղաւ Ամերիկեան ներքին քաղաքական կեանքին: Իրարայարող նախագահներէն ոչ մէկը յանդուրժելու չուզեցաւ խոստովանելու, որ շրջափակումը չէ այն միջոցը, որ պիտի կարողանայ ակնկալուած փոփոխութիւնները յառաջացնելու կղզիէն ներս:

Նախագահ Պարաֆ Օպամա իր պաշտօնավարման տարիներուն կարողացաւ քննարկել նախաձեռնել Ամերիկեան հանրային կարծիքին մօտ: Մեծամասնութիւնը եկաւ այն համոզմունքին, որ երկու ժողովուրդներուն միջեւ փոխարարութիւնը ամենէն լաւ նախապահն է:

Գուայա կատարած այցելութեամբ նախագահ Օպաման առաւ կարեւոր քայլ մը: Այժմ հերքը եկած է այդ երկրի իշխանութիւններուն, որ ժամանակը եկած է ձեռքազատուելու «պաղ պատերազմի» հոգեբանութենէն, Գուայայի ժողովուրդին տալու տնտեսական եւ քաղաքական ազատութիւններ ու երկիրը դուրս բերելու ազատութեան ներքիններէն:

«ՄԱՍԻՍ»

Խուճը Մը Կազմակերպութիւններ Զինգ Կետերէ Բաղկացած Պահանջներ Ներկայացուցին Ընտրական Նոր Օրէնքի Շուրջ

Հայաստանեան ութը հասարակական կազմակերպութիւններ եւ նոյնքան թիւով քաղաքական կուսակցութիւններ, Ընտրական Օրէնսգրքի նախագծի վերաբերեալ 5 պահանջներ ներկայացուցին:

Այս առթիւ հրապարակուած միացեալ յայտարարութեան մը մէջ նշուած է որ, նկատի առնելով Հայաստանի մէջ վերջին տարիներուն տեղի ունեցած ընտրութիւններու եւ յատկապէս՝ Սահմանադրական հանրաքուէի ժամանակ արձանագրուած ընտրակեղծիքներու տեսակները, ընտրական գործընթացներու նկատմամբ հանրային վստահութեան բացակայութիւնը, ինչպէս նաեւ Ազգային ժողովին ներկայացուած Ընտրական Օրէնսգրքի բովանդակութիւնը, պահանջներ յայտարարուած կազմակերպութիւնները կը նկատեն որ, ընտրական գործընթացի որակական փոփոխութիւն կրնայ արձանագրուել միմիայն այն պարագային, եթէ օրէնսգրքին մէջ ներառուին կարեւորագոյն հինգ կէտեր:

Ա. Ընտրողներու կողմէ ստորագրուած եւ լրացուած ցուցակներու հրապարակումը:

Բ. Ընտրողներու ցուցակներու մաքրում՝ վրաստանի մէջ կատարուած ձեռքով: Մասնաւորապէս, պէտք է պարզուին հանրապետութեան մէջ չգտնուող քաղաքացիները եւ ընտրողներու ցուցակներուն մէջ այդ անհատներու անուն ղիմաց առանձին նշում պէտք է կատարուի:

Գ. Ազգային ժողովի ընտրութիւնները պէտք է կատարուին համամասնական ընտրակարգով՝ համապետական պարզ (փակ) համամասնական ընտրացուցակներով, բացառելով տարածքային ու վարկանիշային ցուցակներու կիրառումը:

Դ. Ընտրական տեղամասերուն մէջ քուէարկութեան եւ քուէարկութեան արդիւնքներու ամփոփման ամբողջ գործընթաց պէտք է

Շարք էջ 4

Հայաստանի Բանակը Ստացած է Նոր Որակի Ձեւեր

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Պաշտպանութեան Նախարարութեան վարչական համալիրէն ներս ներկայ գտնուելով Հայաստանի Զինուած Ուժերու ղեկավար կազմի հաւաքին, յայտարարած է որ, անցեալ տարուայ վերջաւորութեան հայկական զինուած ուժերը ստացած են նոր որակի զինքեր:

«Տարեկերջին Զինուած ուժերը ստացան որակապէս նոր սպառազինութիւն եւ հետագայ մատակարարման երաշխիքներ: Էլ աւելի կարեւոր է, որ մշակել էք ձեր օգտագործած եզրուածով՝ «զինուած ղեկավարութիւնը զսպելու» նոր հայեցակարգ: Կարծում եմ՝ օգտակար կը լինի օպերատիւ հաւաքի ընթացքում ներկայացնել Պաշտպանութեան Նախարարութեան մօտեցումները տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի եւ երկրի անվտանգութեան ապահովմանն ուղղուած գործառնությունների կատարման նկատմամբ», - ըսած է Սարգսեան:

Սերժ Սարգսեան անդրադարձած է նաեւ, անցեալ տարի սահմանին վրայ արձանագրուած ռազմական գործողութիւններու մակարդակի բարձրացման, ինչպէս նաեւ Հայաստանի մերձակայ ատարած քննուած մէջ իրավիճակին, որոնց շարքին Սուրիոյ եւ Ուզբեկիստանի մէջ:

Նախագահը իր խօսքին մէջ անդրադարձած է անցեալ տարի կայացած հանրաքուէի արդիւնքով Հայաստանի Սահմանադրութեան փոփոխութիւններուն եւ կարեւոր նկատած է նման հաւաքներու ընթացքին քննարկումներ կատարել, թէ ինչպէս են նոր Սահմանադրութեան հանդէպ հաւանական սպառնալիքներու կանխման նպատակով կատարուած բարեփոխումները:

Նախագահը ապա պատասխանած է հաւաքի մասնակիցներու բազմաթիւ հարցերուն, որոնց շարքին Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացի ներկայ փուլի վիճակին:

Փարիզի Մէջ Հնչակեան Երիտասարդները Յաջողեցան Կասեցնել Ատրպէյճանի Հակահայ Միջոցառումը



Փարիզի մէջ՝ Հնչակեան երիտասարդները կը բողոքեն Ատրպէյճանի Հակահայ Միջոցառումն դէմ

Կիրակի, 20 Մարտ 2016-ին, Ս.Գ.Հ.Կ. Ֆրանսայի Նազարբէկ Երիտասարդական Միութիւնը կազմակերպեց բողոքի ցույց մը, Champs - Elysees թատրոնին դիմաց, ատրպէյճանական հակահայ քարոզչութեան դէմ:

Փաստօրէն, այնտեղ ելոյթ պիտի ունենար Ալիեւի պատուէրով, Lamoureux նուագախումբի կատարողութեամբ «Խոճալու 613» համերգը, նուիրուած՝ այսպէս կոչուած «Խոճալուի գոհերուն»:

Այս համերգին միջոցաւ ատրպէյճանական իշխանութիւնները կը մտադրէին հանրութիւնը շեղեցնել Ալիեւի վարչակարգին կողմէ հայերու դէմ գործադրուած ջարդերէն: Հետեւաբար, ատրպէյճանական կազմակերպող մարմինը տեղեկանել էր քաղաքէն Երիտ. Միութեան շարժման եւ բողոքի ցույցին մասին, որոշեց ջնջել «Խոճալու 613» համերգը:

Այս առիթով միութեան կողմէ լոյս տեսած հաղորդագրութեան մէջ կ'ըսուէր՝ «Նազարբէկ Երիտ. Միութիւնը՝ իբրեւ աշխուրջ միութիւն եւ շարժում, այս նախաձեռնութեամբ անգամ մը եւս յաղթահարեց ատրպէյճանական ստալտի քարոզչութիւնները՝ այս անգամ Ֆրանսայի տարածքին, փաստեց հայու զօրաւոր կամքը ընդդէմ պատմական իրականութիւնն ու արդարութիւնը: Կը խոստանանք շարունակել հայու արդար պայքարը այնքան ատեն որ Ատրպէյճան կը փորձէ խեղաթիւրել մեր պատմութիւնն ու անցեալը եւ կը շարունակէ ծաւալել իր հակահայ քարոզչութիւնը Ֆրանսայի մէջ: Վստահեցէք մեր յառաջիկայ գործունէութեանց»:

Այս առիթով կը գնահատենք Ֆրանսայի Ս.Գ.Հ.Կ. «Նազարբէկ» Երիտասարդական Միութեան խիզախ կեցուածքը եւ կը շնորհաւորենք բողոքի այս յանդուգն որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երեւանի համար կարեւոր բեկում
Ուաշինկթոնում

ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Կիպրոսում գտնուող Սերժ Սարգսեանը յայտարարել է, որ ընդունել է ԱՄՆ նախագահ Պարակ Օպամայի հրահրերն ու առաջիկայ օրերին այցելելու է ԱՄՆ: Օպաման Սերժ Սարգսեանին ԱՄՆ է հրահրել վաշինգտոնում տեղի ունենալիք միջուկային անվտանգութեան վեհաժողովին մասնակցելու համար:

Սերժ Սարգսեանի մասնակցութիւնն այդ վեհաժողովին հետաքրքիր է Արցախի հակամարտութեան կարգաւորման համատեքստում, քանի որ Ուաշինկթոն է հրահրուել նաեւ Ատրպէյճանի նախագահ Ալիեւը: Ի դէպ, միջուկային անվտանգութեան Ուաշինկթոնեան առաջին վեհաժողովին Ալիեւը հրահրուած չէր:

Մեծ է հաւանականութիւնը, որ դա պայմանաւորուած է Արցախի հակամարտութեան կարգաւորման գործընթացում Ամերիկեան նախաձեռնութեամբ: ԱՄՆ վերջին մի քանի ամիսներին փորձում է աշխուժօրէն առաջ մղել հրադադարի պահպանման մեխանիզմի գաղափարը: Հայաստանն ընդունել է այն, Ատրպէյճանը մերժում է: Բաքուի մերժումը հասկանալի է՝ հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմը բեկում է մտցնելու հակամարտութեան յետպատերազմեան երկու տասնամեակի գործընթացում եւ ձեւաւորելու է լիովին նոր իրավիճակ, անվտանգութեան եւ կայունութեան առաւել յուսալի երաշխիքներով:

Մեր հաշուով, այդօրինակ մեխանիզմի ներդրումը արմատապէս փոխելու է նաեւ կարգաւորման գործընթացի եւ հակամարտութեան բնոյթն ինքնին, ընդ որում ներառելով ամբողջական տարածաշրջանային նոր հեռանկարներ:

Կը յաջողուի՞ Ուաշինկթոնում կոտրել Ալիեւի դիմադրութիւնը: Ատրպէյճանն այդ գործում մենակ չէ: Տարածաշրջանային բեկմանը ընդդիմանում են նաեւ Ռուսաստանն ու Թուրքիան, որոնք դրա հետեւանքով կարող են կորցնել հարիւրամեայ գերազդեցութիւնը Կովկասի վրայ, ինչի հետեւանքով Կովկասի ստեղծագործական ներուժի փոխարէն, մէկ դար շարունակ պարբերաբար դրսևորուել եւ գեներացուել է դրա պայթիւնավտանգ ներուժը:

Ռուս-թուրքական հակադրութիւնը այդ առումով հանդիսանում է մի գործոն, որն էապէս թուլացրել է դիմադրութեան ներուժը, ստեղծելով որոշակի նախադրեալ հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմի գաղափարն առաջ մղելու համար:

Այստեղ էական է նաեւ այն, թէ ինչպիսի նշանակութիւն ունի այդ գաղափարն ԱՄՆ արտաքին քաղաքականութեան համար, այն միջոց է, թէ կարեւոր նպատակ: Որովհետեւ, եթէ այն միջոց է ինչ որ այլ կարեւոր նպատակների հասնելու համար, ապա հաւանական է, որ ԱՄՆ կարող է այդ նպատակներին հասնել առանց գաղափարի իրականացման, այլ

ընդամէնն այն առաջ քաշելով: Իսկ եթէ այն նպատակ է, ապա պէտք է ենթադրել, որ Օպամայի վարչակազմը կանի հնարաւորը, որպէսզի ԱՄՆ նախագահը իր պաշտօնավարումն աւարտելուց առաջ դրա ակտիւում գրանցի եւս մէկ միջազգային խոշոր յաջողութիւն: Իսկ Արցախի հարցում հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմի ներդրումը եւ դրա շնորհիւ Կովկասի զգալի լիցքաթափումը անկասկած կը լինի միջազգային նշանակութեան յաջողութիւն:

Ուաշինկթոնում սեղանին փաստացի դրուելու է Կովկասի ինդիքը, տարածաշրջանի ստեղծագործական, թէ պատերազմական հեռանկարի դիւնման:

Հայաստանը հանդէս է գալիս խաղաղութեան, ստեղծագործականութեան շահառուի կարգավիճակում: Միաժամանակ, Հայաստանը տարիներ շարունակ հանդիսացել է կայունութիւնը եւ անվտանգութիւնը պահող սուբիեկտ՝ զսպելով Ատրպէյճանի ռազմատենչութիւնը:

Սակայն, զուտ մեթոդաբանութեան տեսանկիւնից այդ ռազմավարութիւնը սպառել է իրեն թէ ներքին, թէ տարածաշրջանային ռազմավարական գործընթացի տեսանկիւնից:

Այդ իմաստով վերանայման ենթակա է ոչ միայն տարածաշրջանային անվտանգութեան համակարգը, ինչն էլ փորձ է արուում անել հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմի նախաձեռնութեամբ, այլ նաեւ Հայաստանի գործողութիւնները եւ դերակատարումը:

Իսկ դա նշանակում է, որ Հայաստանից պահանջուում է ոչ միայն հաւանութիւն այդ մեխանիզմին, դրանով առանցքային անելիքը համարելով աւարտուած, այլ նաեւ լայն ու համակարգային արդիականացում, շօշափելի դիմամիկայով, տնտեսական եւ քաղաքական ինքնիշխանութեան բարձրացում: Պաշտօնական Երեւանը չպէտք է հաւանութիւն տայ ու սպասի, թէ արդեօք ԱՄՆ կը կարողանայ Ատրպէյճանին բերել խաղաղութեան դաշտ: Հայաստանի արդիականացումը Ատրպէյճանին խաղաղութեան դաշտ բերելու լծակներից եւ գործօններից մէկն է, եւ բաւական կարեւորը: Եւ պատահական չէ, որ ԱՄՆ վերջին շրջանում աշխուժացրել է նաեւ այդ ուղղութեամբ իր առաջարկները Երեւանին: Ամբողջ հարցն այն է, թէ որքանով է Երեւանն ունակ դրանց համարժէք արձագանքի:

Հակառակ պարագայում, միայն հաւանութեան արժանացնելով հրադադարի պահպանման միջազգային մեխանիզմի գաղափարը, սակայն անտարբերութեան կամ լոկ իմիտացիայի մատնելով հայկական պետականութեան արդիականացման ինդիքը,

Հայաստանը ոչ միայն չի նպաստում իր համար կարեւոր բեկմանը, այլ փաստացի օժանդակում է Ատրպէյճանի ապակառուցողականութեանը:

«ԼՐԱԳԻՐ»

Լաւ մշակուած փոթորիկ մի բաժակ ջրում

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Հայաստանի ներքաղաքական դաշտում կրքերն աստիճանաբար թեթանում են, եւ դա միանգամայն հասկանալի է՝ նախընտրական շրջանը սկսուել է: Քաղաքական ուժերը, կարելի է ասել, պայքարում են երկու զուգահեռ հարթութիւններում:

Առաջին՝ փորձում են շատից-քիչ տանել ընտրական օրէնսգիրք ունենալ, եւ երկրորդ՝ փորձում են հասարակութեանը համոզել, որ հենց իրենք են ամենաընդդիմադիրը: Եւ ահա այս ֆոնին բաւականին ուշադրաւ բանավէճ է ծաւալուում Աժ պատգամաւորներ Նիկոլ Փաշինեանի եւ Սամուէլ Ալեքսանեանի միջեւ:

Տեսէք, թէ ինչ է տեղի ունենում: Ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւորը խօսում է իշխանական պատգամաւորի բիզնեսներում առկայ մախիւնացիաների մասին, այսինքն՝ անուղղակիօրէն նրան մեղադրում է պետութիւնից հարկեր թաքցնելու (այլ կերպ ասած՝ լրջագոյն քրէական յանցագործութեան) մէջ, իսկ իշխանական պատգամաւորը նրան պատասխան համարժէք մեղադրանք է ներկայացնում՝ ասում է «Նիկոլը մեր ախպերն ա»:

Եթէ մի կողմ թողնենք նրբագեղ ձեւակերպումները, բանավէճը շատ պարզ է. Նիկոլ Փաշինեանը Սամուէլ Ալեքսանեանին ասում է «դու յանցագործ ես», նա էլ ասում է «յանցագործը դու ես»: Բայց ուշադրութիւն դարձրէք մեղադրանքների բովանդակութեանը: Փաստօրէն, ըստ Սամուէլ Ալեքսանեանի, իշխանութիւնների հետ լինելը (իշխանութիւնների «ախպերը» լինելը) միլիոնաւոր տոլարների հարկեր թաքցնելուն համարժէք քրէական յանցանք է:

Ամբողջ ինդիքն այն է, որ մեր հաշուով՝ Սամուէլ Ալեքսանեանն իրաւացի է: Այո, Հայաստանում «իշխանութիւններ» եւ «յանցագործներ» բառերը վաղուց հոմանիշներ են: Սա, իհարկէ, չի նշանակում, թէ իշխանութեան վերին օղակներում բացառապէս յանցագործներ են. այնտեղ նոյնպէս նորմալ մարդիկ կան: Չի բացառուում անգամ, որ նրանցից շատերն իսկապէս մտածում են նաեւ պետական շահերի մասին: Բայց կրկնում ենք՝ խօսքը հասարակական ընկալման մասին է: Հասարակութիւնն իշխանութիւններին ընկալում է որպէս յանցագործներ, եւ իշխանութեան մէջ գտնուողները շատ լաւ գիտեն դա: Դրա համար էլ «այսինչը մերոնցից մէկն է» արտայայտութիւնն ընկալուում է որպէս քրէական մեղադրանք:

Ու հիմա պատկերացրէք՝ այն իշխանութիւնները, որոնք հասարակութեան կողմից ընկալուում են որպէս յանցագործներ, թեւքերը քշտած՝ ընտրական օրէնսգիրք են մշակում, որով մի տարի յետոյ պիտի ձեւաւորուի յաջորդ խորհրդարանը: Հարց է ծագում ո՞րը պիտի լինէր այս իրավիճակում թիւ մէկ ինդիքը: Բնականաբար՝ բոլորը (ընդդիմադիր քաղաքական ուժերը, հասարակական կազմակերպութիւնները եւ այլն) պիտի միաւորուէին ու փորձէին թոյլ չտալ, որ իշխանութիւններն անցկացնեն այդ խայտառակ ընտրա-

կան օրէնսգիրքը: Իսկ ի՞նչ ենք տեսնում դրա փոխարէն: Քաղաքական ուժերից մէկը (ՀԱԿ-ը) փորձեց միասնական պլատֆորմ ձեւաւորել, ու միանգամից ամէն ինչ խառնուեց իրար: Տեսականօրէն համարեա՛ բոլորը ողջունեցին այդ նախաձեռնութիւնը, իսկ գործնականում՝ ահաւոր դալմազալ բարձրացրեցին (այն ենթատեքստով, թէ ինչո՞ւ պիտի ՀԱԿ-ը նման առաջարկ անի, իրենք աւելի՛ լաւ առաջարկներ կ'անեն կամ արդէն արել են):

Աւելին՝ հասարակական գիտակցութեան մէջ արմատաւորուեց այն միտքը, թէ «հա, գիտենք, որ իշխանութիւնները յանցագործ են, բայց չլը էս ընդդիմութեանը նայէք՝ իրար միս են ուտում, սրանցից ի՞նչ սպասենք»: Համաձայնուէք՝ իսկապէս վարպետօրէն մտածուած եւ իրականացուած օպերացիա էր: Այնքան վարպետօրէն, որ հնարաւոր է՝ անգամ օպերացիայի անմիջական մասնակիցները գլխի չընկան, թէ ինչ ինդիք են լուծում (թէեւ սա քիչ հաւանական է՝ քաղաքական դաշտում վաղուց միամիտներ չկան):

Ամէն դէպքում պէտք է արձանագրել մի փաստ՝ քաղաքական ուժերի 90 տոկոսը վստահ է, որ ինչքան իրեն հեռու պահի իշխանութիւններից, այնքան շատ ձայն կը ստանայ յառաջիկայ ընտրութիւններում: Իսկ նման իրավիճակ լինում է միայն այն երկրներում, որտեղ «իշխանութիւններ» եւ «յանցագործներ» բառերը հոմանիշներ են: Յամենայն դէպս՝ հասարակական ընկալմամբ:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Մասիս
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻՍԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՀՆՁՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՋԱՊԱԴԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ԱՆՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանութիւնը Պատրաստ է ԸՕ Նախագծի Շուրջ Բանակցել 4+4+4 Ձեւաչափով

Հայաստանի Իշխանութիւնները պատրաստ են ընտրական նոր օրէնսգրքի նախագծի շուրջ ընդդիմութեան ու քաղաքացիական հանրութեան հետ բանակցել՝ 4+4+4 ձեւաչափով: Կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը դրական արձագանքեց Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի առաջարկին:

«Եթէ իսկապէս փորձելու ենք բարելաւել, փորձելու ենք լուծումներ գտնել, իսկապէս լինելու է անկեղծ քննարկում, ոչ մի առարկութիւն չունենք: Միանշանակ՝ այո, եկէք հաւաքուենք, որոշենք ոնց ենք շարժուում», - ասաց Յարութիւնեանը:

Զուրաբեանը իր հերթին համաձայնեց, որ առաջարկուող ձեւաչափը լինելու է միայն քննարկումների եւ ոչ որոշումների կայացնելու լիազօրութիւն ունեցող մարմին:

«Ներկայ քննարկումների ֆորմատով իրենք գալիս են ինչ-օր-ինչ-օր ներկայացնում են իրենց առաջարկները սեմինարային ֆորմատի նման: Մենք ընդամենը կարողանում ենք մի քանի ընդհանուր սկզբնական սկզբնական հարցեր տալ, եւ բոլոր այդ հարցերին իրենք պատասխանում են իշխանութեան բարձունքից ու իրենց են վերապահում ինչ-որ բան ընդունել, ինչ-որ բան մերժել: Մեր ասածը լրիւ ուրիշ ֆորմատ է, քաղաքական բանակցութիւնների ֆորմատ, որտեղ մենք բոլորս հաւասար իրաւունքներ կ'ունենանք»:

«Նախրա Զոհրաբեանը Քանդում է ԲՀԿ-Ն»

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Նախրա Զոհրաբեանի նպատակն է քանդել կուսակցութիւնը: Մարտի 21-ին, լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք յայտնեց Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Գէորգ Պետրոսեանը, որն օրեր առաջ հեռացել է ԲՀԿ-ից:

«Նախրա Զոհրաբեանը հեռու է քաղաքականութիւնից, նա արդէն հասցրել է խայտառակել իրեն միջազգային կառուցներում: Նախրա Զոհրաբեանի նպատակն է քանդել կուսակցութիւնը, նոյնիսկ գաղափարախօսութիւն չունի կուսակցութիւնը: Նախրա Զոհրաբեանը հրաժարուում է գաղափարախօսութիւնից, քանի որ նա իրականութեանը, իրադրութեանը չարմարուելու լաւ ունակութիւն ունի», - ասաց Գէորգ Պետրոսեանը:

Հայաստանում Բջջային Կապի Աւելի Շատ Բաժանորդ Կայ, Քան Մարդ

2015-ի Հոկտեմբերի դրութեամբ Հայաստանում բջջային կապի 3,47 մլն բաժանորդ կայ: Այդ մասին ասուած է Հայաստանում տեղեկատուական տեխնոլոգիաների ոլորտին վերաբերող հետազոտութեան մէջ, որը հրատարակել է «Ձեռնարկութիւնների ինկուբատոր» հիմնադրամը (EIF): Ֆիքսուած հեռախօսակապի բաժանորդների թիւը սկսել է նուա-

խօսելու: Ստեղծուում է մի ճնշում, որը կարող է կոտրել իշխանական դիմադրութեան պատը: Մենք սրա վրայ ենք աշխատում, որովհետեւ իրենք անդրդուելի են: Եթէ այդ ճնշումը չլինի, իրենք այդ առաջարկները, որոնք ներդրում են իրենց ընտրակեղծարարութեան դաշտը, չեն ընդունի», - ասաց ընդդիմադիր պատգամաւորը:

Խորհրդարանի պետաիրական հարցերի յանձնաժողովի հանրապետական նախագահ Յովհաննէս Սահակեանը ընդգծեց՝ եռակողմ բանակցութիւնները պէտք է լինեն առանց տեսախցիկների: «Եթէ դա լինելու է ոչ թէ ուլտիմատումների, հարցադրումների հնչեցնելու, միանշանակ ընդունելու հարթակ, ի սկզբանէ ասեմ, որ ընդունելի չէ»:

Այդուհանդերձ, ընդդիմադիրների համար ամենասկզբունքային հարցի՝ ընտրողների ցուցակների հրատարակման շուրջ իշխանութեան ներկայացուցիչներն այսօր էլ բացասական պատասխան տուեցին՝ ընդգծելով, որ արդէն իսկ այս հարցում նախագիծը մէկ քայլ առաջ է գործող օրէնսգրքից:

«Դրանք չպէտք է հրապարակուեն, բայց նաեւ չպէտք է լինեն բացարձակ գաղտնի: Շահագրգիռ անձանց, տուեալ պարագայում դիտորդների, վստահուած անձանց համար պէտք է հասանելի լինեն այդ ցուցակները: Մեր առաջարկութիւնը հետեւեալն է՝ նրանց մինչեւ երկու ժամով կը տրուի այդ ցուցակը, որից նրանք կարող են նշումներ կատարել», - ասաց Դաւիթ Յարութիւնեանը:

Նախկին նախարարը յայտնեց, որ իր եւ Նախրա Զոհրաբեանի միջեւ խնդիրներն առաջացել են հենց առաջին օրերից, երբ ինքն առաջարկել է արտահերթ համագումարի օրակարգում ներառել կարեւորագոյն հարցեր:

«Նախրա Զոհրաբեանը չհամաձայնուեց. Մեր միջեւ անձնական կուռի չէ», - յաւելեց նա:

Յիշեցնենք, որ Աւանի ԲՀԿ տարածքային կառավարման խորհուրդը Մարտի 12-ին որոշում էր կայացրել Գէորգ Պետրոսեանին հեռացնել կուսակցութեան շարքերից: Գէորգ Պետրոսեանը 2010թ. Սոցալ նախարարի պաշտօնից հեռացուելուց յետոյ, լքել էր նաեւ ԲՀԿ շարքերը, հինգ տարի անց կրկին վերադարձել: Գէորգ Պետրոսեանը սակայն, վերջին շրջանում ԲՀԿ-ին քննադատել էր սոցցանցերում:

«Հայ Կանանց ճակատ»-ի Անդամները Կրկին Բերման Ենթարկուեցին

«Նոր Հայաստան» քաղաքական շարժման աջակից մի խումբ կանայք Հանրապետութեան հրապարակում բանտարկեալների հագուստով ու շղթաներով լուռ ակցիա անցկացրին՝ պնդելով, թէ Հայաստանում կան քաղաքանտարկեալներ:



«Հայ Կանանց ճակատ»-ի անդամները բերման կ'նթարկուին ոստիկաններու կողմէ:

«Տուեալներ իմացայ, որ Ատրպէյճանում 12 քաղաքանտարկեալ է ազատ արձակուել, մեզ մօտ ընդհակառակը՝ աւելացնում են քաղաքանտարկեալների թիւը», - ասաց ակցիայի մասնակիցներից մէկը:

«Հայ Կանանց ճակատ» նախաձեռնութեան հերթական ակցիայի գլխաւոր պահանջը Ամանորից կալանաւորուած Գէորգ Սաֆարեանի ազատ արձակումն է, ով մեղադրուում է ոստիկանի դէմ բռնութիւն գործադրելու մէջ:

«Երեք ամիս է՝ Գէորգին պահում են կալանքի տակ՝ անհիմն մեղադրանքով, ոչ մի բան ապացուցուած չէ»: «Յոյց տուեցինք, որ մենք չենք հնազանդուում, քանի որ անցեալ օրը մեզ այստեղից տարան, այդ պատճառով մենք նորից վերադարձանք: Սա քաղաքացիական անհնազանդութեան մի տեսակ է: Մենք ուզում ենք ասել, որ չենք վախենում, դուք մեզ այստեղից տարաք, կարող էք էլի տանել, բայց մենք շարունակելու ենք գալ այստեղ, որտեղ դուք թոյլ չէք տալիս մեզ կանգնել, քանի դեռ մեր պահանջները չեն բաւարարուում: Ես համարում եմ քաղաքան-

տարկեալ Գէորգին, Վոլոդիա Աւետիսեանին, Շանթին եւ իր ընկերներին եւ յատկապէս Հայկ Կիւրեղեանին», - ասում էին ցուցարար կանայք:

Ոստիկաններն առաջարկեցին ցուցարարներին ակցիան հրապարակի գորգի հատուածից տեղափոխել շատրուանների շրջակայք, կանայք, սակայն, չհամաձայնեցին՝ նստելով դեմքերին:

«Ստեղ ակցիա անել չի՛ կարելի: Կանացի վերաբերմունք չէք ցուցաբերում, դուք ձեզ կանացի չէք պահում: Հայ կնոջ կերպարի մէջ չէք պահում ձեզ: Եթէ դուք արհամարհում էք ոստիկանի ասածը, դա պատիւ չի բերում», - ասում էր ոստիկանութեան ներկայացուցիչը:

Ակցիան այլ տեղում անցկացնելու առաջարկը մերժելուց յետոյ «Հայ Կանանց ճակատի» 8 անդամներին ոստիկանները տարան բաժին՝ հարկադրաբար մեքենան նստեցնելով:

«Անյարմար է, դուք կին էք, տղամարդուն պէտք է ղիմադրել», - նախատում էին ոստիկանները:

«Յովիկ Արախամեանի Հետ Շատ Ձերմ Յարաբերութիւնների Մէջ Ենք».- Տ. Մարգարեան

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը հերքում է, որ լարուած յարաբերութիւններ ունի վարչապետ Յովիկ Աբրահամեանի հետ:

«Շատ ջերմ յարաբերութիւնների մէջ ենք», - NEWS.am-ի թղթակցի հարցին ի պատասխան ասել է քաղաքապետը՝ անդրադառնալով մամուլում շրջանառուող լուրերին, թէ իրենց յարաբերութիւնները արուել են, քանի որ վարչապետի որդին Երեւանի քաղաքապետ դառնալու ցանկութիւն ունի:

Տարօն Մարգարեանի խօսքով՝

դեռեւս վաղ է խօսել քաղաքապետի ընտրութիւնների մասին:

Նշենք, որ 2017թ. գարնանը Երեւանում կը կայանան քաղաքապետի ընտրութիւններ: Արդէն իսկ մամուլում շրջանառուում են հաւանական թեկնածուների անունները՝ Յովիկ Աբրահամեանի որդին, Տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեան, ՀՀԿ-ական պատգամաւոր Մհեր Սեդրակեանի որդին:

Վարչապետը լրագրողների հետ զրոյցում աւելի վաղ ասել էր, որ իր որդին Երեւանի քաղաքապետ դառնալու ցանկութիւն չունի:

Փորձագէտ. Հայաստանի ԸՕ-ի Նախագիծը Մէկ Քայլ Ետ է Նախորդ Օրէնսգրքի Համեմատ

Ընտրական օրէնսգրքի նախագիծում համամասնական ընտրական համակարգի անուան տակ մենք իրականում գործ ենք ունենալու մեծամասնական ընտրական համակարգի մէկ այլ տարբերակի հետ: Այս մասին Մարտի 21-ի մամուլի ասուլիսի ժամանակ յայտնել է Միջազգային ու անվտանգութեան հարցերով հայկական ինստիտուտի ղեկավար Ստեփան Սաֆարեանը: Անդրադառնալով ընդդիմութեան՝ մատնների դրոշմանը մանր վերաբերող պահանջներին՝ նա նշել է «Գուցէ սա լաւ որոշում չէ, բայց մատնների դրոշմանը նուազեցնել է կեղծիքները նուազեցնելու իր կարողութիւնը»: Ըստ Սաֆարեանի, ԸՕ նախագծի վերաբերեալ միասնական դիրքորոշում ձեւաւորելու տեսակէտից Հայաստանում հիմա հասարակական - քաղաքական համախմբում է տեղի ունենում: «Ընտրական օրէնսգրքի առաջարկուող նախագիծը մէկ քայլ հետ է՝ ՀՀ նախորդ ԸՕ համեմատ», - յաւելել է Ստեփան Սաֆարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԵԱՀԿ-Ը Նախագահող Գերմանիան Եւ Մինսկի Խմբի Համանախագահները Կոչ Են Անում Պահպանել Հրադադարը

ԵԱՀԿ նախագահութիւնում Գերմանիայի կառավարութեան յատուկ ներկայացուցիչ Գերնոթ էրլերը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ջէյմս Ուորլիքը (ԱՄՆ), Իգոր Պոպովը (ՌԴ) եւ Պիեռ Անդրիոն (Ֆրանսիա) Մարտի 21-ին հանդէս են եկել յայտարարութեամբ, որտեղ «վերահաստատել են իրենց հաստատուն յանձնառութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բանակցային կարգաւորման հարցում»:

Համանախագահների տարածած յայտարարութիւնում նաեւ ասուում է. «Խաղաղ կարգաւորման գործընթացում առաջընթաց արձանագրելու համար խիստ անհրաժեշտ է, որ կողմերը ձեռնարկեն բոլոր միջոցները՝ բռնութիւններէ խուսափելու համար, մասնաւորապէս, այնպիսի բռնութիւններէ, որոնք ազդում են շփման գծում եւ Հայաստան-Ատրպէյճան

ասահմանին ապրող խաղաղ բնակչութեան վրայ»:

Այս համատեքստում մենք աջակցում ենք ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան ԱնՋէյ Կասպըիկի կոչին, ով յորդորել էր կողմերին Նովորոզ Բայրամի եւ Սուրբ Զատիկի տօներին խստորեն պահպանել հրադադարը:

Մենք կոչ ենք անում կողմերին ստեղծել պայմաններ, որպէսզի տարածաշրջանի ժողովուրդները կարողանան նշել այդ տօները խաղաղ պայմաններում»:

Յայտարարութիւնում նաեւ նշուում է, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները, ԵԱՀԿ-ն նախագահող Գերմանիայի հետ կը շարունակեն աշխատել կողմերի հետ՝ կարգաւորման տարրերի, բռնութիւնները նուազեցնելու քայլերի եւ մարդկային շփումները խրախուսող ծրագրերի շուրջ:

Moody's-ը Նուազեցրել է Հայաստանի Վարկանիշը

Միջազգային վարկանիշաւորող Moody's գործակալութիւնը նուազեցրել է Հայաստանի երկարաժամկէտ թողարկման վարկանիշը եւ աւագ չպաշտպանուած պարտքի վարկանիշը՝ բացասական կանխատեսմամբ Baa3-ից կայուն B1-ի:

Որպէս հիմնական պատճառներ նշուում են Ռուսաստանից տրանսֆերտների նուազումը, արտաքին ներդրումների մասով անորոշ կանխատեսումը, 2014-ի ազգային արժույթի անկումից յետոյ երկրի արժույթային պաշարների վրայ ճնշումը:

Այլ պատճառների թւում են բիւջետային դեֆիցիտի եւ պետական պարտքի ցուցանիշների վատթարացումը, եւ սպասումը, որ 2017 թվականին Հայաստանի արտաքին պարտքը կարող է անցնել երկրի ՀՆԱ-ի 50 տոկոսից, եթէ ՀՀ տնտեսութիւնը սպասուածից աւելի դրական փոփոխութիւններ չարձանագրի:

2014-ին ՌԴ-ից տրանսֆերտներն արդէն կրճատուել են 10 տոկոսով՝ դոլարային արտադրատուութեամբ եւ 8,6 տոկոսով՝ դրամական արտադրատուութեամբ:

2015-ին դրամք կրճատուել են եւս 35,6 տոկոսով՝ դոլարով եւ 26 տոկոսով՝ դրամով:

Հայաստանի համախառն արտաքին պարտքը (կառավարութիւն եւ կենտրոնական բանկ) 2015-ին աճել է 73,3 տոկոսից մինչեւ աւելի քան 80 տոկոսի, եւ ընթացիկ հաշուի ցուցանիշի ու պետական պարտքի ցուցանիշների

յարաբերակցութիւնն աճել է մինչեւ 168 տոկոսի (2014-ի 153 տոկոսի դիմաց):

Եթէ 2014 թվականին Կառավարութեան պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր 42,5 տոկոս, ապա 2015-ին այն հասել է 48,7 տոկոսի: Պարտքի յարաբերակցութիւնը եկամտների նկատմամբ 180 տոկոսից հասել է 208 տոկոսի: Այսինքն պարտքի չափը հիմա հաւասար է երկու տարուայ բիւջէի:

Անընդհատ աճում է նաեւ պարտքի բեռի աստիճանը: 2013-2015 թվականներին այն կազմել է ՀՆԱ 4,2 տոկոս, 54,2 տոկոս եւ 6,5 տոկոս, իսկ 2016-ին կը հասնի 8,6 տոկոսի: Այլ կերպ ասած, Moody's-ի վերլուծաբանների սպասումների համաձայն, արտաքին պարտքի բեռը կ'աճի աւելի քան 2 անգամ:

Կառավարութեան համար բարդ է լինելու կրճատել ֆիսկալ դեֆիցիտը: Գիւղատնտեսութեան (բարձր բերքի մասին տուեալները) եւ լեռնահանքային արդիւնաբերութեան (Թեղուտի հանքավայրի բացումը) մէջ վարդազոյն էֆեկտից յետոյ ՀՆԱ աճը իրական արտադրատուութեամբ կարող է կրճատուել մինչեւ 2,2 տոկոսով: Վերջին 1-2 տարում դժուար թէ հնարաւոր լինի վերականգնել տնտեսական աճի տեմպերը՝ հաշուի առնելով ՌԴ տնտեսութեան վերականգնման դանդաղ տեմպերը: Արդիւնքում, երկրի վճարունակութիւնը աւելի թոյլ կը լինի, քան նախկինում, նշում են Moody's-ի վերլուծաբանները:

Խումբ Մը Կազմակերպութիւններ

Շարունակուած էջ 1-էն

նկարահանուի առնուազն 5 որակեալ նկարահանման սարքերով՝ որպէս պետութեան պարտականութիւն:

Ե. Ընտրողներուն մատնահետքերով նոյնականացման համակարգի կիրառում կամ մատնետու թանաքոտման կարգի ներդրումը:

Այս պահանջները ներկայացնող կազմակերպութիւնները կը յայտարարեն որ, միայն նման ձեւերով

կարելի է առաջը առնել կրկնակի քուէարկութեան եւ երկրէն բացակայողներու տեղ քուէարկութեան դէպքերուն, որոնք տարածուած են Հայաստանի մէջ:

Այս պահանջագիրին տակ ստորագրած կուսակցութիւններու շարքին են Հայ Ազգային Գոնկրէսը», «Ժառանգութիւն» կուսակցութիւնը, Հայաստանի Ժողովրդական Կուսակցութիւնը, Հայոց Համազգային Շարժումը եւ ուրիշներ:

Նովրուզի Օրերին Հայաստանում Աւելանում Ե Իրանցի Զբօսաշրջիկների Թիւը



Երեւանի մէջ իրանցի զբօսաշրջիկները կը գրուցեն «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցին հետ

«Ես արդէն երրորդ անգամ եմ գալիս Հայաստան: Էլի կը գամ: Հայաստանից յետոյ Վրաստան ենք գնալու», - ասաց մի երիտասարդ իրանցի՝ յաւելելով. - «Երեւանը շատ գեղեցիկ, մոդեռն քաղաք է: Ես նաեւ Կապանն եմ տեսել, Գորիսը, Զերմուկը»:

«Տուրիստական ընկերութիւնը Դուբայ եւ Հայաստան էր առաջարկում: Մենք Հայաստանն ընտրեցինք. մարդիկ այստեղ լաւ են», - յաւելեց նրա կինը:

Առաջին անգամ Հայաստան այցելողները հետեւել են ընկերների խորհրդին, իսկ շատերի համար Երեւանն արդէն սիրուած հանգստավայր է դարձել: Նրանք անգամ իրենց անուանումներն են տուել Երեւանի տեսարժան վայրերին: «Ազատութիւն» ռատիոկայանի իրանական ծառայութեան թղթակից Ռուբիկ Մանասեանի փոխանցմամբ, օրինակ, Կասպազը նրանք անուանում Հազար աստիճան, Հիւսիսային պողոտան՝ Ֆրանսիական փողոց:

Թէեւ իրանցի զբօսաշրջիկների թիւը Նովրուզի օրերին ամէն տարի կտրուկ աճում է, երեւանեան խանութները, սրճարաններն ու ռեստորանները յատուկ չեն պատ-

րասուում:

«Երկու օրուայ համար մի քիչ շատ գործողութիւններ պէտք է կատարուեն: Մենակ մենին չի, որ պէտք է տպագրուի... մենին պէտք է համապատասխանեցնել: Մէկ վայրկեանի բան չի: Շատ պրոբլեմատիկ է նման յաճախորդներին ընդունելը, որովհետեւ նրանց գրեթէ 90 տոկոսը բացարձակապէս ո'չ անգլերէն է խօսում, ո'չ ռուսերէն: Մենք էլ պարսկերէն չգիտենք», - ասաց Հիւսիսային պողոտայի սրճարաններից մէկի մենեջեր Երուանդ Փափազեանը:

Հանրապետութեան հրապարակում զբօսաշրջիկներին Գառնի, Գեղարդ, Սեւան ուղեւորութիւններ առաջարկող վարորդներից մէկը «Ազատութեան» հետ զրոյցում ասաց, որ վերջին տարիներին անգամ պարսկերէն է սովորել եւ զբօսաշրջիկներին առաջարկում է այցելել հիմնականում հայկական եկեղեցիները:

Նա նաեւ իր մտահոգութիւնը յայտնեց, որ այս տարուանից իրանցիները կարող են առանց վիզայի մուտք գործել Վրաստան. - «Որովհետեւ Թիֆլիս իրենց համար շատ է ժամ ա ամէն ինչը: Մեր մօտ թանկ ա»:

Ամենաերջանիկ Երկրների Ցուցակում Հայաստանը 121-րդն Ե՛ 157-ի Մէջ

ՄԱԿ-ի կողմից հռչակուած Երջանկութեան Օրուան՝ Մարտի 20-ին ընդառաջ հրապարակուել է աշխարհի ամենաերջանիկ երկրների նոր ցուցակը:

157 երկրներից կազմուած ցանկում երջանկութեան աստիճանով Հայաստանը վերջին շարքերում է՝ 121-րդ հորիզոնականում: Հարեւաններից Ատրպէյճանը Հայաստանից երջանիկ է՝ զբաղեցնելով 81-րդ հորիզոնականը, իսկ Վրաստանը պակաս երջանիկ է, քան Հայաստանը:

Հայաստանին ու Վրաստանին յաջորդում են աֆրիկեան երկրները, որտեղ, մասնագէտների փոխանցմամբ, կեանքի պայմանները չեն նպաստում երկար ու երջանիկ կեանք ունենալուն:

Ամենաերջանիկ երկրների ինդեքսը կազմելիս մասնագէտները հաշուի են առել երկրներում

մէկ շնչի հաշուով ՀՆԱ-ն, սոցիալական աջակցութիւնը, առողջ կեանքի տեւողութիւնը, կեանքում ընտրութիւն կատարելու ազատութիւնը, առաւանձեռնութիւնն ու կաշառակերութիւնը:

Աշխարհի ամենաերջանիկ ժողովուրդը դանիացիներն են, ապա՝ շուեյցարացիները, ովքեր անցեալ տարի ամենաերջանիկն էին:

Այս տասնեակը համալրում են սկանդինաւեան երկրների ներկայացուցիչները. երրորդ հորիզոնականում իսլանդացիներն են, ապա՝ նորվեգացիները, ֆինները, շուեյցարացիները, թէեւ այս ժողովուրդների շրջանում բարձր է ինքնասպանութիւնների թիւի մակարդակը:

Երջանիկ ժողովուրդների տասնեակում են կանադացիները, հոլանդացիները, աւստրալացիները եւ Նոր Զելանդիայի բնակիչները:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթերին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԱՆՉՑԱԾ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԲԱՂԱՔՆԵՐԸ Կ'ԱՐԴԱՄԱՐՅԵՆ ԹՐՔԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ



Պուլկարիոյ Պուրկաս, Խասքովո Եւ Սվիլենկրատ քաղաքներու քաղաքապետարանները կրնան չստանալ Եւրոպական Միութեան խոստացած նիւթական կարգ մը հատուցումներ, որոնք նախատեսուած էին Պուլկարիոյ Եւ Թուրքիոյ միջեւ անդրսահմանային համագործակցութեան համար:

Պատճառը՝ թրքական կողմին բացասական դիրքորոշումն է նշեալ քաղաքներուն դէմ, անոնց կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման պատճառով:

Ըստ «Արմէնփրես»-ի՝ «Պի.Թի.Վի.» պատկերասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այդ քաղաքներու իշխանութիւնները համոզուած են իրենց գործողութիւններուն իրաւացիութեամբ եւ պիտի չարտօնեն, որ որեւէ պետութիւն միջամտէ իրենց ներքին գործերուն:

Նշեալ արգելքը կու գայ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեանէն, որ թրքական քաղաքներուն վրայ ճնշում բանեցնելով՝ արտօնութիւն չի տար գործակցելու այն քաղաքներուն հետ, որոնք կը ճանչնան:

Հայոց Յեղասպանութիւնը: Այս պատճառով ալ, պուլկարական քաղաքները կրնան կորսնցնել քանի մը միլիոն եւրօ:

Խասքովոյի հետ նախապէս համագործակցած թրքական էտիւրնէ քաղաքի քաղաքապետ Ռեչեփ Կիւրքան Նշած է, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան որո-

շումը վերջնական է: «Խասքովոյի հետ մենք շատ լաւ աշխատած ենք, սակայն այժմ կայ արտաքին գործոց նախարարութեան արգելքը: Պատճառը նախորդ տարի Խասքովոյի քաղաքապետական խորհուրդի որոշումն էր, որով ի չիշատակ Հայոց Յեղասպանութեան՝ քաղաքին մէջ այդի մը անուանակոչուեցաւ», ըսած է Կիւրքան:

Պուրկասի Եւ Սվիլենկրատի հետ Թուրքիոյ յարաբերութիւնները նաեւ վատթարացան, երբ պուլկարական այս քաղաքները որդեգրեցին հռչակագիրներ, որոնցմով կը դատապարտուէր Հայոց Յեղասպանութիւնը:

«Պի.Թի.Վի.»-ի հետ գրոցի մը ընթացքին, Կիւրքան խորհուրդ տուած է նշեալ քաղաքներուն ետդարձ կատարել այդ որոշումներէն՝ յանուն Թուրքիոյ հետ համագործակցութեան:

«Ոչ ոք կրնայ միջամտել, թէ մենք ինչպէ՛ս կ'անուանենք փողոց մը կամ այգի մը», իր կարգին նշած է Խասքովոյի քաղաքապետ Տոպրի Պելիվանով:

Նշենք, որ Պուլկարիա, անցեալ ամիս, Պուրկասի մօտ Թուրքիոյ գլխաւոր հիւպատոսարանին մէջ աշխատող թուրք դիւանագէտ մը «անբաղձալի անձ» որակած է՝ նշելով, որ այդ թուրք դիւանագէտը երկրին մէջ կը ծաւալէ այնպիսի գործունէութիւն, որ կը խախտէ դիւանագիտական յարաբերութիւններուն մասին Վիեննայի համաձայնագիրը:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐԿ

ՍՈՒՐԻԱ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Մոսկուայէն ստացուած լուրերուն համաձայն Ռուսաստան սպառնացած է զինադադարը խախտողներուն դէմ միակողմանի պատասխան հարուածներ տալ եթէ ԱՄՆ մերժէ օրինախախտողներու դէմ միացեալ համաձայնագրի պայմանները անտեսել:

Արդարեւ ռուսական զինուորական շրջանակները ամբաստանած են ԱՄՆին քանի որ համագործակցութիւն ցոյց չի տար միացեալ հսկողութիւն բանեցնելու գործին մէջ: Նման ուշացում կամ անտարբերութիւն կրնայ յաւելեալ գոհերու տեղի տալ: Նշենք նաեւ որ ռուս զօրավարի մը յայտարարութեան համաձայն վերջին զինադադարէն ի վեր միայն Հալէպի մէջ զոհուած են 67 քաղաքացիներ, իսկ Ռաքքա քաղաքին մէջ զոհուած են 39 հոգիներ:



ԼԻԲԱՆԱՆ

ԱՂԲԵՐՈՒ ԴԱՐՅԸ ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐԱՊԵՍ ԼՈՒԾՈՒԱԾ

Պէյրութին ստացուած հաւաստի աղբիւրներուն համաձայն «Ծաղկազարդ»-ի տօներուն «Աղբազարդ» Պէյրութն սկսաւ կամաց կամաց մաքրուիլ իր կուտակուած աղբերէն: Արդարեւ տասնեակներով բռնակառքեր սկսան աղբեր փոխադրել դէպի Նաամէ եւ այլ որոշուած շրջաններ: Սակայն համաձայնութիւնը ժամանակաւոր է եւ պիտի տեւէ 40-60 օր: Այնուհետեւ պէտք է վերջնական լուծում մը տրուի այս խիստ կենսական հարցին, որ կը շարունակուի ութ ամիսներէ ի վեր:

Միւս կողմէ կ'իմանանք թէ Լիբանան որոշած է մաս չի կազմել իրանի եւ Ծոցի երկիրներու միջեւ եղած տարակարծութեանց եւ բացուած ճեղքին, յայտարարեց արտաքին գործոց նախարար Ժպարան Պասիլ:

Նշենք նաեւ որ Լիբանանի սփորթի նախարարութիւնը ցաւ յայտնեց որ Միացեալ Արաբական Էմիրիթները մերժած են մուտքի վիզա տալ Համաժողովի մեկնող մարզիկներուն: Իսկ «Մուսթաֆալ» կազմակերպութիւնը խնդրած է Սէլուտական Արաբիայէն վերատեսութեան ենթարկել Լիբանանի համար նախապէս որոշուած դրամական օժանդակութիւնը կատարելու որոշումը, որ յետագային կասեցուած էր:

ԵՄԵՆ

ԵՄԵՆ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ՆՈՐ ՍՈՒՐԻԱՅԻ ՍԸ

Նաուալ էլ Մադաֆիի համաձայն Եմէնի վրայ տեղի ունեցող շարունակական ոտնձգումներն ու ռմբակոծումները պատճառ պիտի հանդիսանան որ այս երկիրը վերածուի նոր Սուրիայի մը: Իսկ Սէլուտական Արաբիան կը պատճառաբանէ թէ ռմբակոծումներու պատճառն այն է որ կ'ուզեն Եմէնի մէջ վերահաստատուի խաղաղութիւնն ու կայունութիւնը: Այս յարձակումներու ետին ուղղակիօրէն կը մեղադրուի նաեւ Մեծն Բրիտանիան:

Եմէնի ապահովական ոյժերուն համաձայն վերջերս լրագրող մը սպաննուած է եւ 3 թղթակիցներ վիրաւորուած թաէզ քաղաքին մէջ:

ԻՐԱԲ

ՏԱՅԵՇԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԾԱԿԱՏԱԳԻՐՆ ԱՆՈՐՈՇ

Վերջերս տեղի ունեցած օդային յարձակումներու թիրախ հանդիսացած էր իսլամական Տահէշ պետութեան ղեակավարի զօրախումբը: Կը կարծուի թէ խումբին մաս կը կազմէր իր պարագլուխը, որուն ճակագիրն անորոշ կը մնայ:

Միւս կողմէ իրաքի պետական մարմինները ստորագրած ն 296 միլիոն տոլարի համաձայնագիր մը իտալական ընկերակութեան մը հետ, նորոգելու համար փլուզման վտանգի առջեւ գտնուող Մուսուլի ամբարտակը:

ԵԳԻՊՏՈՍ

13 ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔՈՎ

Եգիպտոսէն ստացուած լուրերուն համաձայն Տահէշ իսլամական պետութեան զինեալները Սինայի թերակղզիին վրայ յարձակում մը գործելով էլ Արիշ սահմանագլուխին շրջանին մէջ առ նուազն 13 ոստիկաններ զոհուած են: Արդարեւ 2013ին հանրապետութեան նախկին նախագահ Մուհամմէտ Մօրսիի պաշտօնանկութենէն ասդին ժիհատիստ զինեալներու կողմէ Սինայի մէջ սպաննուած են ասրիւրաւոր ապահովական ոյժերու ծառայողներ: Նոյն խումբն էր որ անցեալ Հոկտեմբերին վար առած էր ռուսական օդանաւ մը, որուն զոհ գացած էին 224 ուղեւորներ:

ՊՈՍԹՐՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՊԱՏԱՐԱԳ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑԱՆԵ

Պոսթրնի կաթողիկէ եկեղեցին, առաջին անգամ ըլլալով, պատարագ պիտի մատուցանէ Օսմանեան կայսրութեան մէջ Հայոց Յեղասպանութեան զոհերու չիշատակին: Այս մասին Մարտ 17-ին յայտարարած է Պոսթրնի արքեպիսկոպոս, կարտինալ Շոն Փաթրիք Օմելլին:



Վկայակոչելով »The Boston Globe«-ը՝ News.am-ը կը հաղորդէ, թէ կարտինալը պատարագ պիտի մատուցանէ Ապրիլ 23-ին, Սուրբ Խաչ տաճարին մէջ:

Իր յայտարարութեան մէջ կարտինալը չիշատակած է Հոռմի Պապին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը:

Օմելլին նաեւ համերաշխու-

թիւն յայտնած է քրիստոնեաներուն, որոնք կը տառապին ամբողջ աշխարհի մէջ:

Արարողութեան ներկայ պիտի գտնուին հայ համայնքի ներկայացուցիչներ եւ կրօնական առաջնորդներ:

ԴՌՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՅԱՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԻՆ ՈՒ ՆՈՐ ՄԱՐՏԱՅԻՆՆԵՐՈՒ ԱՌՁԵՒ



8 փետրուար 2016-ին Լոնտոնի Հայագիտական Ուսմանց Ծրագիրը կազմակերպեց դասախոսություն մը, նիւթ ունենալով Լիբանանի եւ Սուրիոյ հայ համայնքները: Այս նիւթին անդրադառնալը անխուսափելի է, նկատի առնելով Միջին Արեւելիքի եւ մանաւանդ Սուրիոյ մէջ տիրող վերջին տարիներու ճգնաժամը: Լիբանան եւ Սուրիա բնակող հայ համայնքները վտանգի տակ են, հետեւաբար անոնց պատմութեան եւ ինքնութեան ծանօթանալը կենսական է, որպէսզի անոնց մշակոյթն ու յիշողութիւնը պահպանուի: Այս դասախոսութեան համար Հոտմէն յատուկ հրաւիրուած էր ծանօթակաղեմական Տոքթ. Նիքոլա Միլիորինոս: Տօքթորականը ստացած է Institute of Arab and Islamic Studies, University of Exeter-էն: Անոր ուսումնասիրութիւնները կեդրոնացած են Սուրիոյ եւ Լիբանանի, ինչպէս նաեւ ժամանակակից արաբական աշխարհի էթնօ-մշակութային բազմազանութեան վրայ: 1998-էն 2000, ան միջազգային անշահութաբեր կազմակերպութեան մը համար կ'աշխատի, որ կ'աշակցէր Սուրիոյ պաղեստինցի փախստականներուն: Վերջերս ան վարած է օգնական-դասախօսի պաշտօնը Մարքի Իֆրանէ քաղաքի Al Akhawayn համալսարանին մէջ, միեւնոյն ժամանակ ըլլալով անկախ ուսումնասիրող եւ խորհրդատու: Տօքթ. Միլիորինոյի գիրքը՝ «(Re)Constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis» լոյս տեսաւ 2008-ին Bergahn Books հրատարակչութեան կողմէ:



Տօքթ. Միլիորինոս անդրադարձաւ երկու պատմաներու, որոնք իր գիրքին մէջ իրարու հետ գուգահեռ կ'ընթանան: Առաջինը՝ կը հիւսէ պատմը արաբական հողերուն վրայ հաստատուած հայ հոծ գաղթականներուն, որոնք աքսորի մէջ իրենց ազգը պահպանելու համար յատուկ առաքելութիւն մը որդեգրած էին: Այս շրջածիրին մէջ ան յղում ըրաւ Խաչիկ Թէօլէօլեանի կողմէ ստեղծուած «մնայուն սփիւռք» հասկացութեան: Այս համայնքները վերածուեցան մշտական սփիւռքի երբ փախստականները դադրեցան զանգուած ըլլալէ եւ դարձան հաստատութիւններու եւ միութիւններու շուրջ գործող համայնքներու: Ինչպէս նշուած է գիրքին խորագիրին մէջ, հայերը շատ մեծ աշխատանք տարին ոչ միայն վերականգնելու իրենց մշա-

կոյթը, այլ նաեւ կերտելու ինքնութեան նոր ձեւեր: Երկրորդ պատմը կը վերաբերի Լիբանանի եւ Սուրիոյ պետութիւններու մէջ հայ համայնքներուն ապրելաձեւին: Հայերը ինչպէ՞ս փոխյարաբերեցան այս քաղաքական միաւորներուն հետ: Իրենց ինքնութիւնը պահպանելու համար այս պետութիւններուն հետ ինչպէ՞ս բանակցեցան: Ասոնք կարելոր հարցադրումներ են, նկատի ունենալով որ լիբանանեան եւ սուրիական պետութիւնները տակաւին նորակազմ էին: Ասոնք նախ կը կառավարուէին Ֆրանսայի կողմէ, իսկ Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն ետք, յետ գաղութատիրական պետութիւններ նկատուած են, որոնք փորձած են միասնական ինքնութիւններ կերտել: Տօքթ. Միլիորինոս ինքն իրեն հարց տուաւ թէ արդեօք հայերը Լիբանանի եւ Սուրիոյ պետութիւններուն մէջ իրենց տեղը գտա՞ծ են: Ան եզրակացուց որ պատասխանը «այո» է, հակառակ որ Լիբանանի եւ Սուրիոյ հայերու փորձառութիւնները եւ անոնց արդիւնքները տարբեր եղած են: Լիբանանի մէջ հայերը շատ աւելի տեսանելի ներկայութիւն են. անոնք Լիբանանի համայնքային դրութեան վրայ խարսխուած քաղաքականութեան մէջ ընդունուած դերակատարներ են (consociational): Ան հակիրճ ներկայացուց consociational (հայերէն եզրը գոյութիւն չունի) քաղաքականութիւնը, որ քաղաքական գիտութիւններու մասնագէտ Արէնտ Լէյքհայթի կողմէ ստեղծուած եզր մըն է, կը վերաբերի ընկերութեան մը մէջ մասնաւոր խումբերու կողմէ ընտրուած վերնախաւերու ներկայացուցչութեան: Յետոյ այս վերնախաւը տեսալ ընկերութեան տարբեր փոքրամասնութիւններու կամ խումբերու հետ իշխանութեան բաժնեկցումի ծրագրի մը շուրջ կը բանակցի: Այսպէս, հայերը լիբանանեան տարասեռ ընկերութեան մէջ գոյութիւն ունեցող իշխանութեան բաժնեկցումի իրենց բաժնեւէջիչը ունին: Իսկ Սուրիոյ մէջ իրավիճակը բաւական տարբեր է, ուր հայերը քաղաքականութեան մէջ պաշտօնական դեր չունին: Հոն կրցած են գոյատևել եւ բարգաւաճիլ հակառակ ընկերային ոլորտին մէջ իրենց անշահ ներկայութեան: Հայերը կրցած են յաջողութեամբ իրագործել իրենց մշակութային ծրագրերը, սորվեցնել հայերէն դպրոցներէ ներս եւ պահել իրենց քաղաքական ինքնութիւնները

(յատկապէս Դաշնակցութիւնը), այնքան ժամանակ որ այս ամէնը տեղական ոլորտէն հեռու էր: Դասախօսը իր խօսքը շարունակելով ըսաւ որ երեւութապէս կը թուի թէ Լիբանանի եւ Սուրիոյ մէջ հայերու ունեցած այս կարգավիճակը իրենց շնորհուած բարիք մըն է, բայց իրականութեան մէջ այս իրականութիւնը մարդասիրական բնոյթ չունի: Լիբանանը եւ Սուրիան անշահախնդիր սկզբունքներէ անհրաժեշտօրէն մեկնելով չէ որ հայ գաղթականներ ընդունուած են: Հայերը նպաստած են Լիբանանի եւ Սուրիոյ պետութիւններուն՝ իրենց օրինականութեան հաստատումին մէջ: Քրիստոնեաներուն եւ մասնատականներուն միջեւ ժողովրդագրական հաւասարակշռութիւնը պահելու համար քրիստոնեաներուն հոսքը ձեռնադրու էր: Այս իրողութիւնը մնայուն չէր, այլ՝ իր բնոյթով ժամանակաւոր «յարմար» կարգադրութիւն մը: Ուրեմն կը մնայ հարցնել թէ արդեօք այս ժամանակաւոր կարգադրութիւնը կայուն հիմք մը ունի հայերու համար: Այն յեղաշրջումները եւ փոփոխութիւնները, որոնց ենթարկուեցան Լիբանանը եւ Սուրիան 20-րդ դարու ընթացքին, մանաւանդ Լիբանանի քաղաքացիական պատերազմը եւ Սուրիոյ ազգայնական արաբացումի ծրագիրը, կարծես նշանակալից ժխտական ազդեցութիւն մը չունեցան հայ համայնքներուն վրայ: Անոնց ներկայութիւնը Լիբանանի եւ Սուրիոյ մէջ կը շարունակէ մնալ ուշագրաւ եւ ընդհանրապէս անփոփոխ: Տօքթ. Միլիորինոյի համաձայն այս գաղութներուն գոյութեան հիմնական սպառնալիքը տնտեսական ճգնաժամն է, իսկ համայնքներուն յարատեւումը պայմանաւորուած է նուազագոյն հայ զանգուածի մը ներկայութեամբ: Դպրոցներու գոյութիւնը պայմանաւորուած է աշակերտներով, նոյնպէս՝ հրատարակչներու գոյութիւնը՝ ընթերցողներով, եւ այլն: Նուազագոյն զանգուածի թիւի անկումով, նմանատիպ հաստատութիւններ ստիպուած եղած են փակել իրենց դռները: Այսինքն, «հայկական շուկայի» անկում մը կայ, հետեւաբար՝ հայ համայնքներու թուլացում: Նմանատիպ հարցեր մղեցին Տօքթ. Միլիորինոյի անդրադառնալ աւելի ընդհանուր հարցի մը, ի՞նչ կը նշանակէ մշակութային ինքնութեան պահպանում: Ան նշեց մշակոյթի պահպանումի երկու ձեւեր. կա՛մ թանգարանի մը միջոցաւ, կա՛մ որպէս ապրող միաւոր: Եթէ մշակոյթի մը նահանջը ան-

Շար.ը էջ 19

Խորովածի Երեկոյ
 Կազմակերպութեամբ ՄԳՀԿ Սան Ֆերնանտո Վեյի՝
ՍԵՓԱՆ ՍԱԳՊԸ ԳԻԻԼ Մասնաճիւղի: Տեղի կ'ունենայ
 Ծաբաթ՝ 2 Ապրիլ 2016-ին երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ:
 Մուտք՝ \$25, փոքրեր մինչեւ 12 տարեկան՝ ձրի
 Տեղերը ապահովելու համար հեռ. Կամ թէքստ. 559-313-0146:
 Կայք՝ 9537 Shoshone Ave, Northridge, CA 91325


KEBAB NIGHT
 Organized by Los Angeles San Fernando Valley **SDHP**
STEPAN SABAH GUL Chapter
 Saturday, April 2, 2016, starting from 7:00 pm
 \$25 per person, kids under 12 do not pay
 For tickets call or text 559-313-0146
 Address: 9537 Shoshone Ave, Northridge, CA 91325

ՀԻՔԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՎ ՔԱԼՈՂ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Ամերիկայի նախագահական ընտրություններում Հանրապետական թեկնածու Տանըլտ Թրամփը (Donald Trump) կը շարունակէ յաջողութիւն արձանագրել, հակառակ իր աջ ու ձախ ըրած ատելալատ ու ցեխարձակող յայտարարութիւններուն եւ տրամաբանականօրէն անձիշդ, արտառոց ու տարօրինակ ելոյթներուն եւ կարծիքներուն: Անոր ընտրապայքարին յաջող արդիւնքը կը թուի թէ հետեւանքն է քարոզչութեան մը, որ կը խօսի սրտին Ամերիկայի macho եւ cowboy հոգեբանութեամբ մարդոց, որոնք իրենց «մաքուր» եւ «գտարիւն» ըլլալը կը յայտարարեն «USA, USA» բարձրադարակ կանչով, եւ այսամորթ ու այսակրօն մարդոց մէջ կը տեսնեն վտանգ ու վնաս ու հաւատարմութեան պահաս Ամերիկայի նկատմամբ: Այդպիսի մարդիկ, որոնց շարքերուն մէջ անկասկած կան նաեւ ճերմակամորթի գերակայութիւնը (white supremacy) դաւանող Ku Klux Klan ցեղապաշտ խումբի հետեւողները, երբ յաջողին՝ կը դառնան վտանգաւոր իրենց երկրին եւ ազգին համար, որովհետեւ ընթացք կու տան քաղաքական վիճակի մը, «որ պատ կը բարձրացնէ մարդոց միջեւ, փոխանակ կամուրջներ բարձրացնելու», ըստ Ֆրանչիսկոս ամենասուրբ եւ ամենամարդասէր Վատիկանի Պապին: Թրամփի չառաջացուցած ցեղապաշտ ոգին եւ աղմուկը Ամերիկայի մէջ, որ ձեւով մը նման է Եւրոպայի մէջ ատենօք ուռճացած ոգիին եւ աղմուկին որ հիմնադրատակ ցնցեց ու կործանեց կառույցները մարդկութեան, պէտք է իր սաղմին մէջ խեղդել, որպէսզի Հիթլերի ընթացքով քաղոք այս ամերիկացին չյաջողի եւ վտանգ չդարձած՝ կասեցուի:

Գանատայի CBC հեռատեսիլի պաշտօնական կայանը Շաբաթ գիշեր, Փետրուար 20-ին, իր «The Passionate Eye» յայտագրով ցոյց տուաւ վաւերագրական ֆիլմ մը «The Mad World of Donald Trump» անունով, զոր պատրաստած էր անգլիացի լրագրող մը: Կ'ըսուի թէ անորոշ պատճառներով ֆիլմը կարելի չէ տեսնել Ամերիկայի մէջ: Մէկ ժամուան ընթացքին հանդիսատեսը իրագեկ կը դառնար թէ ինչպէս միլիոնատէր Թրամփի ծնած էր հարուստ ծնողքի գաւազն՝ գերմանացի հօր եւ սկովտիացի մօր կողմէ, եւ թէ ան ինչպէս, տակաւին պատանի տարիքին, ծնողքին կողմէ զրկուած էր «կրթութեամբ» գինուորական քէմփի նման «Boot Camp Boarding School» դպրոցի մը մէջ, որովհետեւ եղած էր կուռագան ու չափազանց չար: Ան իր հակայ հարստութիւնը դիզած է գնելով շէնքեր ու կալուածներ Նիւ Եորքի մէջ չնչին գիներով անցեալ դարու եօթանասունական թուականներուն, երբ այդ քաղաքը նիւթական եւ տնտեսական անկումի մէջ կը գտնուէր: Անգլիացի լրագրողը, խօսելով Թրամփի ճանչցող մարդոց հետ, կը փորձէր ցոյց տալ եւ յայտնաբերել Թրամփի ամէն ինչ շրջելու եւ յաղթահարելու նկարագիրը՝ ի գին ամէն ինչի...: Առաւել, ներկայ ըլլալով Թրամփի ընտրական հաւաքներուն, ան հոն տիրող մթնոլորտը կը գտնէր խիստ բռնկելի եւ գայն կը նմանցնէր ըմբշամարտի մրցումի սրահի (wrestling match arena):



Վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ Տանըլտ Թրամփի թեկնածութիւնը նորանոր յաջողութիւններ արձանագրելու երթ կրնայ ունենալ, գայն դարձնելով Հանրապետականներու հաւանական թեկնածուն յառաջիկայ Նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրութիւններուն: Ու եթէ ան ըլլայ այդ թեկնածուն, թող ամէն փոքրամասնութիւն ընէ իր կարելին Ամերիկայի մէջ, որ «we are going to make America great again» խաբուսիկ լոզունգով հանդէս եկող այդ ցեղապաշտը չհասնի նախագահական աթոռին, որովհետեւ անոր եւ իրեն նմաններուն աչքին վատահեղէք նոյն արժէքը կը ներկայացնեն բոլոր անոնք, որոնք իրենց պէս չեն, այսինքն տարբեր են ծնունդով կամ ծագումով, մորթով կամ գոյնով, միտքով կամ գաղափարով, հաւատքով կամ հաւատքի տարբերակներով:

Թող մանաւանդ ամէն հայ չխաբուի, որ իսլամներու եւ մեքսիկացիներու դէմ այդքան ատենութեամբ խօսող այդ ցեղապաշտը իր կայծերէն եւ զարկերէն անվնաս պիտի պահէ հայուն պէս միւս բոլոր փոքրամասնութիւններու պատկանող ամերիկացիները, որովհետեւ անոնք որոնք աշխարհագրականօրէն չեն ուզեր կամ չեն գիտեր Սերպիան գանազանել Միպերիայէն (Թրամփի նմանները), վստահաբար չեն գիտեր կամ չեն ուզեր գանազանել նաեւ հայը թուրքէն եւ իսլամէն...:

Դուրսէն ներս թափանցել ուզող իսլամ ծայրայեղականներու վտանգին համազօր վտանգ են նաեւ Ամերիկան ներսէն թունաւորել ուզող նմանները Թրամփի: Զխաբուողին՝ հազար համբոյր, եւ հասկցողին՝ հազար բարեւ:

ԵՐԿՐԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՌԱԿԸՊ ԶԱՐԱՔՈԼՈՒ

Խորհրդային Միութեան անկումէն ետք մարդուն մէկը «Քաղաքակրթութիւններու Բախումը» անունով գիրք մը գրեց:

Շատեր չափազանցութիւն համարեցին այդտեղ գրուածները: Ուրիշներ դաւադրութեան փորձ կոչեցին:

Իրողութիւն է սակայն որ այսօր եթէ ոչ քաղաքակրթութիւններու, բայց կրօններու միջեւ պատերազմ մը կ'ապրինք: Որդի Պուշերը անիմաստ կերպով սկիզբ կը դնէր Իրաքեան Բ. պատերազմին, գայն կը կոչէր «Խաչակիրներու Արշաւանք»: Թէեւ աւելի ետք փորձեց այդ կոչումը մեղմացնել, բայց եղածը լեզուի պարզ սայթաքում մը չէր երբեք: Պատմութեան մէջ խաչակիր արշաւանքներու հակադրեցութիւնը «Ճիհատ» եղած է, այսինքն պատերազմ կրօնի համար:

Ճիհատի համաշխարհային արդի քաղաքականութեան վերադարձը կը գուզադիպի գաղութատիրութեան գարգացման շրջանին: Իսկ այս գործօնէն օգտուողները շատ անգամ իսլամ կրօնին չեն պատկանած:

Տակաւին ժ.Թ. դարուն գաղութատիրութեան ծաւալման դիմաց սկսած էին ծաղկիլ համաիսլամական գաղափարներ: Ապտուլ Համիտ ալ, Օսմանեան երկրէ ներս քրիստոնեայ ժողովուրդներուն գարթօնքը եւ պահանջները կանխելու միտումով, յատկապէս քիւրտ եւ այլ իսլամ ժողովուրդները գուզելու համար, շահագործեց կրօնի խաղաքարտը:

Այս տարի Ձատիկը զուգադիպում է Յեղատարութեան ոգեկոչման հարիւր ու մէկ ամեակին: Մէկ դար է անցնում այն ազգակործան թուականից, որ մի ամբողջ անմեղ ժողովուրդ իր իսկ բնօրրանում սրի ու հրի քաշուեց եւ երկիրը բռնազրաւուեց, մի ծաղկուն երկիր՝ գետերով, լիճերով, արգաւանդ դաշտերով, ծաղկավառ սարերով եւ յիշատակներով լի:

Յեղատարութեան յիսուն ամեակից ի վեր առաւել կազմակերպուած մեր աւանդական կուսակցութիւնները յետոյ Հայաստանը միացած աշխատանք է տարւում, որ թուրքիան իր ժխտողական քաղաքականութիւնից հրաժարուի եւ հաշտուի իր պատմութեան հետ, ընդունի ցեղասպանութիւնը եւ հատուցում կատարի: Արդար պահանջատիրութիւնը անժամանցելի է, հայ ժողովուրդը անտեղիտալիօրէին շարունակելու է իր պայքարը մինչեւ արդարութեան վերականգնում:

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐՈՒ ԶԱՄԵՐԳ ԼՈՆՏՈՆԻ ՍՈՒՐԲ ԵՂԻՇԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ



19 Մարտ 2016-ի երեկոյեան Լոնտոնի Սուրբ Եղիշէ Եկեղեցին մէջ տեղի ունեցաւ հայ հոգեւոր եւ դասական երգերու համերգ, որ կազմակերպուած էր Աւագ Շաբթուան հոգեւորագրարողութիւններէն ընդառաջ: Հայաստանէն ժամանած էին խումբ մը երգիչներ եւ Լոնտոնի Հայ Օփերայի երգիչներուն հետ ներկայացուցին ինչպէս հոգեւոր, այնպէս ալ դասական երգերու կատարումներով: Հայաստանէն ժամանած էին «Սաղմոսերգու» երգչախումբի մեներգիչները Վահէ Բեկոյեան (Թենոր եւ երգչախումբի հիմնադիր), Անդրանիկ Մալխասեան (պարիթոն), Արեն Աւետեան (թենոր, դաշնակահար, կոմիտասի անուան պետական երաժշտանոց), Աբէլ Կիւլբեղեան (թենոր), Ռուզաննա Գրիգորեան (կոմիտասի անուան պետական երաժշտանոց), դաշնամուրային եւ երգեհոնային նուագակցութեամբ կատարեցին Հայր Մեր, Տէր Ողորմեա, Յօգնութիւն մեզ ժամանեա, Կարող Տէր, Սուրբ ես, Տէր, Բաց Մեզ Տէր, Ուր ես Մայր իմ, Սիրտ իմ Սասանի, Ի Ննջմանէդ երգերը հայ միջնադարեան հոգեւոր գանձարանէն: «Լոնտոնի Հայ Օփերայի» եւ «Սաղմոսերգու» երգչախումբի երգիչները կատարեցին հատուածներ Տիգրան Չուխաճեանի «Կարինէ» եւ «Արշակ Բ.»-ը, Արմէն Տիգրանեանի «Դավիթ Բէկ», «Անուշ» օփերաներէն եւ Ալեքսանտր Յարութիւնեանի «Սալեաթ Նովա» ստեղծագործութիւններէն: Հոգեւոր երգերուն միջեւ կատարուեցան Սուրբ գրային ընթերցումներ, ներկայացան Սուրբ Քրիստոսի մուտքը Երուսաղէմ, աղօթքը Գեթսեմանիի պարտէզին մէջ, ինչպէս նաեւ իւղաբեր կիներու այցը կոյս գերեզմանին ու Յիսուսի հրաշափառ յարութիւնը: Յայտագիրի սկսելէն առաջ մասնակիցները մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին յիշատակը թեմի նախկին առաջնորդ եւ նորոգ հանգուցեալ Եղիշէ արք. Կիզիբեանի: Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկ-

եանը եւ Մեծն Բրիտանիոյ մէջ Յոյն Ուղղափառ Թեմի առաջնորդ Գրիգորիոս արքեպիսկոպոսը աղօթեցին երջանկալիշատակ Եղիշէ արքեպիսկոպոսի հոգիի խաղաղութեան համար:

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեանը (Օքսֆորտի համալսարան) ներկայացուց Սուրբոյ մէջ տեղի ունեցող զարգացումներու շուրջ բանախօսութիւն մը: Յաւարտ համերգին հանդէս եկաւ առաջնորդ Սրբազանը, ներկայներուն բերաւ իր օրհնութիւններն ու բարեմաղթանքները՝ խօսեցաւ համերգին



մասին որպէս իւրօրի նակ աղօթք, նաեւ կարեւորեց այն հանգամանքը, որ համերգը կը կրէ բարեգործական նպատակ՝ օգնութիւն Սուրիահայրութեան: Կատարուեցաւ հանգանակութիւն որպէս աջակցութիւն Հայ Առաքելական Եկեղեցույ Դամասկոսի Թեմին՝ Դամասկոսի եւ Հոմսի մէջ իրականացուելիք կրթական ծրագիրներու համար:

Համերգը կազմակերպուած էր Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի Հայոց Թեմի հովանաւորութեամբ: Ծրագիրը կեանքի կոչուեցաւ թեմի եկեղեցասիրաց երիտասարդական միութեան պատասխանատու, սոլիստ Անայիս Հեղոյեանի եւ Սուրբ Եղիշէ Եկեղեցույ եւ Լոնտոն Հայկական օփերայի խմբավար Արիս Նա դիրեանի աշխատանքով: Ծրագիրը հովանաւորած էին անհատ բարերարներ, առանձին ծուխեր ու կազմակերպութիւններ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ-ԶԱՐԹՕՆՔ
Ն. ԲԱԼԱՅԵԱՆ

Զատիկ, Յարութիւն.
Աստուածային մի
Յրաշք գերբնական:
Մեծ Կարդապետը
վասն արդարութեան
Քայլեց Գողգոթայ,
Չարչարուեց, խաչուեց,
Թաղուեց, չմեռաւ:
Յարութիւն առաւ
Ու մնաց անմահ:

Իմ ժողովուրդն էլ
Տանջուեց դարերով,
Տեսաւ արիւն, սով,
Թալան, կոտորած,
Բայց Տիրոջ նման
Նորից կեանք առաւ
Ու կերտեց Չարթօնք...
Փառք Քո Յարութեան,
Մարդկութեան փրկիչ,
Փառք քո Չարթօնքին,
Իմ հայ ժողովուրդ...

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ԱՐՈՒԵՍԸ ՅԵՂԻՆԱԿ ԼՈՒՄԻՆ ԶԵՅԹՈՒՆՑԵԱՆ

ԺԱՆՏԹՔԱՍՈՒՆԻ

Ամեն ժողովուրդը իւրաքանչիւր պահույն տարազ ունի: Յաճախ ազգ մը կը ճանչնանք իր տարազէն՝ անոր ազգային մէկ տոնահանդէսին ընթացքին:

Տիկ. Լուսին այս իրողութիւնը կը հաստատէ իր հրատարակած «Հայկական Տարազի Արուեստը» պատկերազարդ շքեղ գիրքով, որ վերջերս լոյս տեսաւ իր խմբագրութեամբ ու տարազներու պատրաստութեան աշխատանքով: Ծրագրին գործադրութիւնը՝ Կարինէ Սէօլթմէզեան, գիրքին արուեստի ձեւաւորումը Տիգրան Քասունի, հայերէն լեզուով խմբագրումը՝ Հրաչ Սեփեթեան, անգլերէնի թարգմանութիւնը Իշխան Ճինպաշեան, նկարիչը Ռոպ Սիլվերմէն, մագի ու յարգարանը՝ Ժամին Պիլեմեան են հրատարակութեան մեկնասար՝ ազնուական բարերար՝ Պրն. Ժերըլա Թրփանճեան:

Զէյթունցեան իր յառաջաբանին մէջ կը գրէ «ժողովուրդի մը կեանքը հասկնալու համար չի բաւեր անոր ակնաւոր դէմքերուն, անոր քաղաքական կամ կրօնական պատերազմներուն հետ ծանօթանալը, այլ պէտք է նկատի առնել անոր տան ներքին եւ արտաքին կենցաղը եւ յատկապէս ուսումնասիրել անոր զգեստը, քանի որ տարազը ցեղերու քաղաքակրթութեան զլխաւոր արտայայտութիւններէն մէկն է եւ այլազան ժամանակներու մէջ կրած փոփոխութեամբ ցոյց կու տայ անոնց աստիճանական զարգացումը»:

Ան կը շարունակէ ըսելով թէ 3000 ամեայ մեր պատմութեան ընթացքին Հայաստանի մէջ տեղի ունեցած են տեղաշարժեր, արտագաղթեր, օտար ցեղերու ներխուժումներ, որոնք անշուշտ իրենց ազդեցութիւնը ունեցած են մեր տարազներուն վրայ, սակայն չեն խաթարած ազգային ուրոյնութիւնը եւ որ յաճախ ազդեցութիւն ձգած է դրացի ժողովուրդներու տարազին վրայ: Հայ ժողովուրդը շատ հին ժամանակներէ սկսեալ մշակած, հիւսած, կարած, ասեղնագործած եւ ստեղծագործած է տալով արուեստի բարձրարժէք գործեր: Թիւրիմացութիւններ եղած են, ինչպէս Սասունի պարագային, ենթադրելով որ տարազները քրտական են: Սակայն փաստը այն է, որ Սասունը իր անառիկ լեռնային դիրքով, գերած մնացած է ազդեցութիւններէ եւ միջագետքէն բռնի բերուած քիւրտերն են որ ազդուած են մեր տարազներէն:

«Հայկական տարազները կարելի է բաժնել երկու մասի Արեւելեան նահանգներ՝ Տարօն, Սասուն, Բարձր Հայք, Վասպուրականի ու Բաղէշի շրջանները, որոնք հաւատարիմ մնացած են Հայկական ավանդութիւններուն: Իսկ Արեւմտեան շրջանները Սեբաստիա, Կեսարիա, Կիլիկիա, Խարբերդ եւ Տիգրանակերտ թրքական իշխանութեան տակ մնալէ ետք, կրած են Անատոլիական ազդեցութիւն: 1830ին Սուլթանին հրամանով Կիլիկիոյ բոլոր քաղաքներուն մէջ կ'արգիլուի քրիստոնեաներուն իրենց ազգային տարազը հագուել: Հայ կիլիկերը թուրք կիլիկերու նման սեւ շարձաֆով պէտք է ծածկուէին,

կանաչ գոյնը որպէս իսլամական նուիրական գոյն, մեզի համար արգիլուած էր գործածել»:

«Հայկական տարազներու կերպաները եղած են մաքուր բամպակէ բուրդէ եւ մետաքսէ: Մետաքս կտորի արտադրութիւնը, անշուշտ, կապուած էր շերամապահութեան հետ: Պատմական Հայաստանի շատ մը քաղաքներուն մէջ հայ ժողովուրդը կը զբաղէր շերամապահութեամբ, որմէ կը ստանային մետաքս: Մետաքս ունեցած են Տիգրանակերտ, Խարբերդ, Մուսա Լեռ, Արցախ, Տաւուշ եւ շարք մը ուրիշ քաղաքներ: Բոժոժի մետաքսաթելի եւ մետաքս կտորի վաճառական հայերը աշխարհի տարբեր երկրներ կը տանէին եւ կը ծախէին...»:

Բամպակէ կտաններ ունեցած են Այնթապը, Արաբկիրը, Ակնը: Արաբկիրի արտադրութիւնը բամպակէ կերպասը Մանուս կը կոչուէր: Մանուսայի մեծ վաճառականներ եղած են Արաբկիրցիները: Այլաճա կոչուած բամպակէ կերպասը Կեսարացի հայերու արտադրութիւնը եղած է, որով տղամարդոց շապիկ կը կարէին:

Շատախը յայտնի եղած է իր բուրդէ կերպասով: Ունեցած է մեծ քանակութեամբ բուրդ: Շատախցիները մշակած են եւ ստացած ընտիր կերպաս, զոր կը ծախէին ընդհանրապէս Վասպուրական նահանգին մէջ:

Այս սքանչելի հրատարակութեան աւիթով, հարցազրոյց մը ունեցանք Տիկ. Զէյթունցեանին հետ: Բայց նախքան այդ ճանչնանք զինք ու իր ազգանունէր կեանքին, որ զինք առաջնորդած է գրելու այս արժէքաւոր գիրքը՝ պատմութեան համար:

Ան ծնած է Հալէպի մէջ, Սուրիա ուսումը առնելէ ետք նուիրուած է ուսուցչական ասպարէզի: Պաշտօնավարած է Հայկական Բարեգործական վարժարաններէն ներս, եղած է Հ.Բ.Լ.Մ.ի Պետրոս Աղամեան թատերախումբի վարչութեան անդամ: Այս վերջինին մէջ դերեր վերցուցած է ու թատերախումբին 25 ամեայ իր ծառայութեան համար արծաթեայ մետալով պարգեւատրուած: Երկար տարիներ մաս կազմած է Հալէպի Սպենդիարեան երգչախումբին:

25 տարիներ վարած է Հալէպի մէջ Մարաշի Հայրենակցական Միութեան Տիկնանց վարչութեան ատենապետուհիի պաշտօնը: Կազմակերպած է Հայկական ասեղնագործութեան ցուցահանդէսներ, յատկապէս ազգային տարազներու: Միութիւնը զինք պատուած է ոսկեայ մետալով:

Հարցազրոյցի ընթացքին հետաքրքրական տեղեկութիւններ ստացանք:

- Տիկ. Զէյթունցեան ե՞րբ յղացաք, որ գրելու էք այս գիրքը:
- 1987ին էր երբ թրքական հեռուստացոյցէն տեսայ Հայկական տարազներով եւ Հայկական պարերով թրքական ցուցադրութիւն մը: Անշուշտ թէ ունենալու էին Հայկական աղբիւրներ որոնցմէ օգտուած էին: Այդ օր անդրադարձայ որ պատրաստելու եմ այս գիրքը՝ ճշմարտութեան համար:
- Ի՞նչպէս յաջողուցիք գործադրելու ձեր մտադրութիւնը:
- Երբ այս գաղափարը յղացայ,

մտածեցի որ առանձինս չեմ կրնար գործադրել: Մարաշիներու Տիկնանց Միութիւնը քաջալերեց զիս: Իւրաքանչիւր անգամ ստանձնեց մէկ ձեռք տարագի պատրաստութիւնը եւ մնացեալները միութիւնն ու ես: Երբ շատ հրաւերներ եկան ցուցադրութեանց համար, կարելի չեղաւ ամփոփուիլ: Աղջիկս, Կարինէն օգնեց ինձի կարելի եղած չափով:

- Հաւանաբար ձեր մանկութեան շրջանին ունեցած էք հայկական ձեռագործով հետաքրքրուելու փորձառութիւն մը: Կը յիշէ՞ք նման բան մը:

- Մայրս երբ տան գործերը վերջացնէր կը նստէր եւ ասեղնագործով կը զբաղէր: Ես հետաքրքրութեամբ կը դիտէի: Նրեշնչուած եմ իրմէ հայկական ձեռագործի արուեստի աշխարհով: Այս գիրքը այդ օրերէն եկող բոլոր փափաքներուս պոռթկումն ու իրականացումն է:

- Ինչ աղբիւրներ օգտագործեցիք եւ որքան տեւեց ձեր աշխատանքը:

- Երեք տարի է ի վեր կը պրպտէի պատմութեան գիրքեր, հայկական տարազներու գիրքեր, ինչպէս համազգայինի, Իրանահայերու եւ անձնական հաւաքածոներս: Բոլորն ալ ներշնչում եղան ինձի:

- Ինչ նպատակ կը հետապնդէք այս գիրքը հրատարակելով:



- Կ'ուզէի որ այս գիրքը ուղեցոյց ըլլայ ապագայ սերունդին որ տեսնէ մեր ազգային տարազներու գեղեցկութիւնը, ատոր պատմութիւնը իմանայ որպէսզի վկայութիւն մը ըլլայ հայկական կենցաղին:

- Հայ կանանց նուիրուած ձեր նուիրումի սկզբունքը ի՞նչպէս կը նկարագրէ:

- Իմ սկզբունքս այն է որ կիները միայն խոհանոցով չզբաղին, այլ կանանց ձեռնարկներէն օգտակար նիւթ մը առնելով ներշնչուին: Այս գիրքը վկայութիւնն է իմ սկզբունքիս:

Հարցազրոյցը վերջ գտնելով, մեր հետ կը մնայ տիպար հայուհիի մը կեանքի սկզբունքին վկայութիւնը:

**ԱՅՆԹԱՊԻ ԼԵՐՈՍԱՄԱՐՏԻ
96-ՐԳ ՏԱՐԵԳԱՐԶԻ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Կազմակերպութեամբ՝
ԱՅՆԹԱՊԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլխաւոր բանախօս՝
ԳՈՒԿՏ. ԻՄԻՒՏ ԳԻՒՐԹ

Ուսանող Քլայք Համալսարանի Տեղապահուցեան դասընթացին
**Կիրակի, 3 Ապրիլ 2016, կէսօրէ ետք ժամը 5:00-ին
Կլէմսոնի Սր. Գրիգոր Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ
«Գոյումնեան» սրահին մէջ
1510 E. Mountain St., Glendale, CA 91207**

ՀԻՌՈՒՄԻՐՈՒԹԻՒՆ ԾՐՈՎ ԼԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԷՐ ԲՈՒՐԳ

ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION
Presents
**THE 96TH ANNIVERSARY COMMEMORATION
OF AINTAB HEROIC RESISTANCE**

Keynote Speaker
DR. UMIT KURT
Ph. D. Candidate, Clark University Holocaust and Genocide Studies Program

Sunday, April 3, 2016, at 5:00 p.m.
St. Gregory Armenian Catholic Church – Kouyoumjian Hall
1510 E. Mountain St., Glendale, CA 91207

RECEPTION ALL ARE WELCOME
Visit the Aintabtzy web page: www.noraintab.org

ՏԱՐԸ ԼԱԲԱԳՈՅՆ ՄԷԶԲԵՐՈՒՄ ԳԱՐԼՈՍ ԳԱՍԴԱՆԵՏԱՅԷՆ

-Այնպես վարուիր, կարծես երագի մէջ ես: Գործէ խիզախ եւ արդարացուածներ մի փնտուեր:

-Չափէն աւելի բան մի բացատրեր: Երբ կը բացատրես, թէ ինչու չես կրնար ընել այս կամ այն բանը, իրականութեան մէջ դուն կ'արդարանաս թերութիւններու համար՝ յոյս ունենալով, որ լսողները բարի պիտի ըլլան եւ ներեն քեզի:

-Կեանքէն առաւելագոյնը քաղելու համար մարդ պէտք է կարենայ փոխուիլ: Ամենադժուարը փոխուելու մտադրութիւն ունենալն է:

-Ես երբեք ոեւէ մէկուն վրայ չեմ բարկանար: Ոչ մէկը կրնայ այնպիսի բան ընել, որ արժանի ըլլայ իմ կողմէն նման հակազդեցութեան: Մարդոց վրայ կը բարկանաս, երբ կը զգաս, որ անոնց արարքները կարեւոր են: Ես շատոնց արդէն նման բան չեմ զգար:

-Դուն պիտի միշտ յիշես, որ ուղիւն ընդամէնը ուղի է: Եթէ կը զգաս, որ պիտի չերթաս այդ ուղիով, փոխէ ճանապարհը:

-Այժմ դուն չես կրնար հասկնալ զիս, որովհետեւ վարժ ես մտածել այնպէս, ինչպէս կը նայիս:

-Եթէ քեզի համար հաճելի չէ այն, ինչ կը ստանաս, փոխէ այն, ինչ կու տաս:

-Մարդոց մեծամասնութեան ամենամեծ սխալը ներքին երկխօսութիւնն է: Երբ մարդը կը սորվի դադրեցնել զայն, ամէն ինչ կարելի կը դառնայ: Ամենամեծ երկարաժամկէտի նախազիծերը իրականացնողն են դառնան:

-Մարդիկ, իբրեւ կանոն, իրենք

իրենց հաշիւ չեն տար, որ իւրաքանչիւր պահ կրնան իրենց կեանքէն մէկ կողմ նետել որեւէ բան: Իւրաքանչիւր ժամանակ, վայրկեանապէս:

-Միակ իմաստուն խորհրդատուն, որ ունինք, մահն է: Ամէն անգամ երբ կը զգաս, որ ամէն ինչ վատ կը դասաւորուի եւ դուն կործանման եզրին ես, ձախ չըջիր եւ մահին հարցուր, թէ իրօք այդպէս է:

-Իւրաքանչիւրը կ'երթայ իր ճանապարհով: Եթէ հաճուցող կ'երթաս, կը նշանակէ՝ ատրկա քու ճանապարհը է: Եթէ վատ կը զգաս, որեւէ պահու կրնաս փոխել ճանապարհը, որքան ալ հեռու գացած ըլլաս: Եւ ատրկա ճիշդ պիտի ըլլայ:

-Մեզի անհրաժեշտ է մեր ամբողջ ուժը՝ մեր ներսի ապուշութիւնը յաղթահարելու համար:

-Ամբողջ հարցը այն է, թէ ինչով կը կողմնորոշուիս... Մեզմէ իւրաքանչիւրը ինքն է ինքզինք դժբախտ կամ ուժեղ դարձնողը: Եւ առաջին, եւ երկրորդ պարագային անհրաժեշտ աշխատանքի ծաւալը նոյնն է:

-Գիտելիքի մարդ դառնալու համար անհրաժեշտ է զինուոր ըլլալ, ոչ թէ ամէն ինչէ դժգոհող փոքրիկ: Պայքարիլ՝ չյանձնուելով, չբողոքելով, չնահանջելով, մինչեւ որ տեսնես: Եւ այդ ամէնը անոր համար, որ հասկնաս, թէ կեանքի մէջ ոչինչ իմաստ ունի:

-Այն, ինչ կ'ընես այս պահուն, լիովին կրնայ երկրի վրայ վերջին արարքը ըլլալ: Աշխարհի վրայ չկայ այնպիսի ուժ, որ քեզ երաշխաւորէ, թէ դուն մէկ վայրկեան եւս պիտի ապրիս:

ԸՆԴԵՂԷՆԸ ԿՕԳՆԷ ԱԻՆԻ ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ

Ընդեղէնը բարձր ջերմութ (calorie)ունեցող սնունդ է, որ հարուստ է ճարպերով ու սպիտակուցներով: Ըստ հետազոտութիւններու՝ ընդեղէնը առողջութեան համար կը դատուի օգտակար ուսելիքներու շարքին: Ընդեղէնը խորհուրդ կը տրուի բոլոր անոնց, որոնք ունին շաքարախտ, սրտային հիւանդութիւն եւ այլ քրոնիկ հիւանդութիւններ:

Մասնագէտները վերջերս պարզած են, որ բոլոր այն մարդիկ, որոնք ամէն օր ընդեղէն օգտագործած են, անոնց մօտ նուազած է շատ ու շատ փտանգաւոր քրոնիկ հիւանդութիւններու վտանգը: Ընդեղէնի կանոնաւոր օգտագործումը մասնաւորապէս 30 տոկոսով կը նուազեցնէ շաքարախտի վտանգը, քաղցկեղի վտանգը՝ 39 տոկոսով, եւ այլասերիչ ջղալին խանգարումները, ինչպէս՝ Ալցհայմերի եւ Փարքինսոնի հիւանդութիւնները՝ 45 տոկոսով: Պարզուած է նաեւ, որ ամէն օր ընդեղէն օգտագործողներու մօտ 20 տոկոսով նուազած է տարբեր հիւանդութիւններէ մահացութեան վտանգը: Հե-

տազօտութեան համաձայն՝ ընդեղէնով հարուստ սննդականոնը ոչ միայն կ'ապահովէ կիներու երկարակեցութիւնը, այլեւ կ'օգնէ կարելի եղածին չափ խուսափել քրոնիկ հիւանդութիւններէ:

Իր բաղադրութեան շնորհիւ՝ ընդեղէնը կը համարուի առողջ սննդակարգի կարեւորագոյն բաղադրիչ: Անիկա հարուստ է առողջարար ճարպերով, ինչպէս նաեւ կը պարունակէ օսլայի գերծած թաղանթներ, որոնք ընդեղէնը կը դարձնեն հրաշալի ընտրութիւն բոլոր անոնց համար, որոնք կը տառապին շաքարախտէ: Անիկա նաեւ կ'օգնէ նիհարնալ փափաքող մարդոց: Ընդեղէնը հարուստ է նաեւ Լարկինին կոչուող ամինաթթուով, որ կը պաշտպանէ սիրտը շրջապատող արիւնատար անոթները, այդպիսով՝ նաեւ նոյնինքն սիրտը: Ընդեղէնը վիթամիններու, հանքանիւթերու եւ մանրաթելերու հարուստ աղբիւր է, որ կրնայ ապահովել ամբողջ մարմնի առողջութիւնը:

ԻՆՉՊԵՍ ՉՆԵՂՈՒԻԼ ՄՏԵՐԻՄՆԵՐԷՆ ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Գաղտնիք չէ, որ նեղուող մարդիկ աւելի դժուար կը կառավարեն իրենց զգացումները, ատոր համար շատերը կը հարցնեն ինչպէ՞ս փոխուիլ եւ չնեղուիլ մօտ մարդոցմէ, եթէ անոնք որեւէ տհաճ բան ըրած են՝ ցաւ պատճառելով իրենց: Գոյութիւն ունին որոշումներ, որոնք կրնան արագ հանգցնել հոգիին մէջ հասունցող բացասականը:

Ինչպէ՞ս դադարիլ ամէն ինչ սրտին մօտ ընդունելէ: Բացասական զգացումները վնասակար են: Հաւաքուելով, անոնք կը դառնան տարբեր հիւանդութիւններու պատճառ: Այդ պատճառով, ով որ յաճախ կը նեղուի, ան յաճախ կը հիւանդանայ: Ընկճախտները, ջղալին պոռթկումները եւ կեանքէն դժգոհութիւնը բացասաբար կ'ազդեն ո'չ միայն առողջութեան, այլեւ մարդկային կեանքի գործունէութեան բոլոր բնագաւառներուն վրայ:

Գործնական խորհուրդներ հոգեբաններու կողմէ Մտածեցէք, արդեօք նեղացնողը իր խօսքերով կամ գործողութիւններով իրականութեան մէջ ուզած է ցաւեցնել ձեզ: Խօսեցէք բացէ ի բաց եւ դրէք բոլոր վերջակէտերը:

Եթէ խօսիլ կարելի չէ, ընդմիջում տուէք եւ փորձեցէք որեւէ դրական բան գտնել ստեղծուած իրավիճակին մէջ ժամանակի ընթացքին զգացումները կը տկարանան եւ այդքան ալ անզիջում չեն ըլլար:

Կարելի է ինքնաներշնչման գործիքներէն կիրարկել՝ նկարել նեղուածութիւնը թուղթի վրայ կամ հարուածել բռնցքամարտի

տանձիկը:

Պարզապէս մոռնալ եւ զբաղիլ սեփական գործերով, հակամարտութիւնը կը լուծուի ինքնիրեն: Ջբաղիլ ասեղնագործութեամբ:

Անոնք, որոնք յաճախ կը նեղուին, շրջապատը լրջօրէն չ'ընդունիր գիրենք: Այդ պատճառով, որպէսզի ծիծաղելի չերեւաք, փորձեցէք ամէն ինչին աւելի թեթեւ նայիլ: Հսկեցէք ձեր զգացումները:

Ինչպէ՞ս շատ զգացումներ փայլին չըլլալ »Ես այնքան յաճախ ապրումներու մէջ կ'իյնամ, ինչ ընեմ«,-յաճախ կը հարցնեն զգացմունքային աղջիկները իրենց ընկերուհիներուն, որոնք հանգիստ կ'երեւին: Աւելի հանգիստ ըլլալուն կ'օգնեն հետեւեալ միջոցները.

-Երկարով զբաղիլ՝ յատուկ շնչոգական մարզանքը, մտախոհութիւնը կը հանգստացնեն ջղալին համակարգը:

-Հանգիստ երաժշտութիւնը, լարուածութիւնը կը թեթեւցնէ:

-Արուեստը՝ ներկերով նկարելը ոչ միայն կը հանգստացնէ, այլեւ նոր գաղափարներ կը ներշնչէ:

-Մարմնամարզանքը, որմէ ետք նեղուածութիւնը շատ աննշան կը թուի:

Եւ յիշեցէք՝ մանրուքներու համար մտերիմներէ եւ հարազատներէ նեղուիլը պարզապէս չիմարութիւն է, չէ՞ որ անոնք այն մարդիկն են, որոնք ձեզի միշտ կ'աջակցին եւ կը սիրեն, անկախ տրամադրութենէ եւ հանգամանքներէ: Սորվեցէք ներել եւ սրտին շատ մօտ չընդունիլ ուրիշներու խօսքերը եւ քայլերը:

ԱՄԵՆԱՍՈՒՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԶԻՄՆՈՒԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Թէեւ տարածուած կարծիք կայ, որ հակադրութիւններու վրայ կը հիմնուին ամենամուր յարաբերութիւնները, սակայն, վերջերս փորձագէտները պարզած են, որ ատրկա այդքան ալ ճիշդ չէ:

Ըստ անոնց, այն գոյգերը, որոնց չի միաւորեր շահերու ընդհանրութիւնը, դատապարտուած են բաժանման: Որովհետեւ հակառակ սեռի հետ կապը աւելի հետաքրքրական կը դառնայ, եթէ տղամարդն ու կինը իրարու մէջ որեւէ ընդհանուր բան կը գտնեն: Ատրկա կրնայ ըլլալ հակումները, հետաքրքրութիւնները, կեանքին նայելու եղանակը:

Հակառակ պարագային մար-

դոց համար հետաքրքրական չ'ըլլար շարունակել ծանօթութիւնը: Այնպէս որ, սխալ է այն կարծիքը, թէ ամենամուր յարաբերութիւնները կը ձեւաւորուին այն մարդոց միջեւ, որոնք իրարու հակապատկեր են:

Փորձագէտներու հետազոտութեան արդիւնքները կը վկայեն, որ ամենամուր յարաբերութիւնները կը հիմնուին ընդհանուր հետաքրքրութիւններու վրայ, ոչ թէ՛ հակառակը: Անոնք պարզած են, որ որքան աւելի մեծ են գոյգին ընդհանուր հետաքրքրութիւնները, այնքան ամուր են տղամարդու եւ կնոջ յարաբերութիւնները:

ԻՆՉՈՒ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՔՆԱՆԱԼԷՆ ԱՈԱՉ ԱԼՔՈԼ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Մեզմէ շատերը որեւէ վատ բան չեն տեսներ քնանալէն առաջ մէկ գաւաթ գինի խմելուն մէջ: Բայց արդեօք ատրկա օգտակար է մարմնին համար:

Ալքոլի որեւէ չափ, իրօք, կ'օգնէ աւելի շուտ քնանալուն: Գիշերուան առաջին կիսուն մարմինը կ'իյնայ խոր քուն՝ առանց երազներու:

Սակայն, երկրորդ կիսուն, հանգիստի փոխարէն մարմինը ստիպուած կ'ըլլայ վերամշակել խմած ալքոլը, որ այնքան ալ դիւրին չէ:

Քնանալէն առաջ ալքոլի օգտագործումը կը յանգեցնէ քունի խանգարումներու՝ աւելի մակերեսային քունի եւ իւրաքանչիւր ձայնէ արթնալու հաւանականութեան:

Այդ պատճառով պէտք չէ օգտագործել ալքոլը քնանալէն առնուազն 1,5-2 ժամ առաջ:

Անիկա կրնայ նաեւ խախտել ձեր շնչառութիւնը. Ալքոլը հիանալիօրէն կը թուլցնէ մկանները, սակայն կը վատացնէ խոքոքի փայտի կամ շնչուղիներու հետ կապուած խնդիրներ ունեցողին վիճակը:

Անիկա կ'արթնցնէ գիշերուան կիսուն. Ալքոհոլը միզամուղ է, որ կը նշանակէ, որ դուք աւելի յաճախ պիտի ուզէք լուացարան երթալ:

Անիկա պատճառ կը դառնայ վատ երազներու. Ջղալին համակարգը այնպէս ստեղծուած է, որ ալքոլի մեծ քանակութիւնը քնանալէն առաջ կը նպաստէ վատ երազներ տեսնելուն:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

ՀԱՐՑԱԶԱՐՈՅՑ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ Հ.Մ.Մ-Ի ՖՈՒԹԳՈԼԻ ԽՈՒՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐԴԱՆ ԳՈՏԱՊԱՊԵԱՆ-Ի ՅԵՏ



ՀԱՅ ՄԱՐՄԵԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.ՄԸ հիմնուած է Հալէպ , 1921ին, իբր հայկական մարզականակառուցական սփիւռքահայ կազմակերպութիւն: Ունի մասնաճիւղեր որոնք կը գործեն հայաշատ գաղութներ ունեցող գանազան երկիրներու մէջ, որոնցմէ են, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Անգլիա եւ Միացեալ Նահանգներ: «ԱՌՈՂՋ ՄԻՏՔԸ ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄէՋ Է» սկզբունքով գործող Մարզանքի ու մարմնակրթանքի գարկ տուող Հ.Մ.ՄԸ հիմնած է պասկեթպոլի, վոլէյպոլի, թէնիսի, աթլեթիզմի, ֆութպոլի եւ այլ խումբեր, որոնք բոլոր երկիրներու եւ յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի մէջ աննկատ չեն եղած, այլ զգալի յաջողութիւններով եւ յաղթանակներով բազմիցս հասած են ախոյեանութեան բարձրունքին: Տեսլապաշտ ու հեռատես հիմնադիրներու ու անձնուէր բարերարներու շնորհիւ, Միացեալ Նահանգներու դրօշին տակ, Լոս Անճելոսի մէջ 70ական թուականներուն հիմնուած Հ.Մ.Մ.ը, նոյնպէս ունեցած է բարգաւաճ մարզական կեանք, հիմնելով զանազան մարզական խումբեր եւ մասնակցելով ոգեւորիչ մրցաշարքերու, յաղթանակի ու հպարտութեան անմոռանալի պահեր պարգեւելով իր հ ա մ ա կ ի ը ն ե ռ ու ն :

Ներկայիս Լոս Անճելոսի Հ.Մ.Մի ֆութպոլի խումբը պատնէշի վրայ է շնորհիւ խումբի պատասխանատու եւ փորձառու մարզիչ Վարդան Գոճապապեանի, որուն հետ ունեցանք հետեւեալ հարցազրոյցը:

Կարելի՞ է ներկայացնել ձեր կենսագրական գիծերը: Ինչու՞ ընտրեցիք ֆութպոլը:

Ֆութպոլի սէրը փոխանցուած է ինծի իմ հօրմէս: Հայրս՝ Խաչատուր Գոճապապեան ծածկանունով «ԻԼԻԱՍ», Լիբանանի Հ.Մ.Մի ֆութպոլի խումբի լաւագոյն խաղողներէն կը համարուէր: Բնականաբար: Փոքր տարիքէս դարձայ ֆութպոլի սիրահար:

1956էն մինչեւ 1973 անդամ էի Պէյրութի Հ.Մ.Մի «Մասիս» ապա ձիւնիի շրջանի խումբերուն: Փոխադրուելէ ետք Միացեալ Նահանգներ, դարձայ Լոս Անճելոսի եւ Փասատինա շրջանի Հ.Մ.Մի ֆութպոլի խումբի անդամ, սակայն փոքր արկածի հետեւանքով հրաժարեցայ եւ դադրեցայ խաղալէ: Ֆութպոլի հանդէպ ունեցած յատուկ սէրս եւ հոգեկան կապս չխզուեցաւ, ուստի նշանակուեցայ մարզիչ եւ Հ.Մ.Մի վարչական ու խումբի պատասխանատու:

1993ին մասնակցեցայ Հ.Մ.Մի Ընդհանուր Համագումարին, որպէս ներկայացուցիչը Հայ Մարմնամարզական Միութեան Քալիֆորնիոյ մասնաճիւղին:

Մարզիչն եղած եմ նաեւ Ամերիկեան պատանեկան խումբերու

ու այսօր կը վարեմ նոյն պաշտօնը Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի ֆութպոլի խումբէն ներս:

Ե՞րբ հիմնուած է Հ.Մ.Մի ֆութպոլի առաջին խումբը Լոս Անճելոսի մէջ եւ ի՞նչ հանգրուաններէ անցած է:

Հ.Մ.Մի առաջին խումբը հիմնուած է 70ական թուականներուն, անոր կողքին կային պասքէթպոլի ու վոլէյպոլի խումբեր՝ աղջիկներու ու մանչերու: 2014ին որպէս մարզիչ ստանձնեցի խումբի պատասխանատուութիւնը:

Ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ Հ.Մ.Մի խաղողը ձեր կարծիքով:

Ֆութպոլի խումբին մաս կազմողը պէտք է ունենայ մարզական ազնիւ հոգի եւ աւողջ մարմին: Պէտք է գիտակ ըլլայ ֆութպոլի օրէնքներուն ու յարգէ զանոնք. իսկ Հ.Մ.Մի խումբին միանալու համար, այս պայմաններու կողքին պէտք է ըլլայ հաւատարիմ իր միութեան ու կազմակերպութեան, դառնալով օրինակելի մարզիչ:

Ի՞նչ տարիքային խմբաւորում-



ներ ունիք խաղողներու համար:

Ներկայիս ունինք երկու խումբեր, ըստ մարզական կարողութիւններու եւ ձիրքերու:

Մարզական խումբերը, յատկապէս ֆութպոլի խումբերը ունին հովանաւորողներ: Որո՞նք են ձեր խումբերու հովանաւորողները:

Մեր խումբի գլխաւոր հովանաւորն է Հ.Մ.Մի վարչութիւնը եւ անոր կողքին կանգնող համակիրները, որոնք նիւթապէս եւ բարոյապէս կ'օժանդակեն այս խումբին առանց որեւէ ակնկալութեան:

Այս առթիւ շնորհակալական

Շաք.բ էջ 19

On the occasion of the 101st Commemoration of the Armenian Genocide

ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS

In Collaboration with

Pan Armenian Organizations

Presents

Hrant Dink Oratorio

Dedicated to the Legacy of Hrant Dink

Guest of Honor

Rakel Dink

Composer : Majag Toshigian

Lyricist : Bercuhi Berberyan

Pan Armenian Choir & Orchestra

Artistic & Choir Director: Stepan Gozumian

Music Director : Artashes Kartalian

Soloists

Soprano Soprano Tenor

Alenoush Yeghnazar Nadima Avakian Raffi Kerbabian

Saturday, April 16, 2016 at 7:30 PM

Ambassador Auditorium

131 S. Saint John Ave.

Pasadena, CA 91105

For more Information & Tickets, Contact (818)342-0110

Abril Bookstore (818)243-4112

Sardarabad Bookstore (818)500-0790

Berj Bookstore (818)244-3830

or

bolsahye1976@gmail.com

ՀԵՆՐԻԽ ՄԻՒԹԱՐԵԱՆԻ ԿՈԼԸ ՍԿԻԶԲ ԴՐԵՑ «ԲՈՐՈՒՄԻԱՅԻ» ԿԱՄԱՅԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ



Գերմանիայի առաջնութեան 27-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» հիւրընկալուեց «Աուգսբուրգին» եւ տարաւ կամային յաղթանակ: Թոմաս Տուխելի գլխավորած թիմը խաղի ընթացքը բեկեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միւթարեանի կողմից շնորհիւ՝ հաւասարեցնելով հաշիւը: Հայ ֆուտպոլիստը խփեց 10-րդ գոլը Գերմանիայի ըթնացիկ առաջնութիւնում:

«Բորուսիան» յաղթեց 3:1 հաշուով եւ 64 միաւորով երկրորդ տեղում է: Առաջատարը Միւնխենի «Բաւարիան» է՝ 69 միաւոր: Դորտմունդեան թիմը 16 միաւորի առաւելութիւն ունի երրորդ տեղում ընթացող Բեռլինի «Հերտայի» նկատմամբ:

ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՈԼԸ MLS-ՈՒՄ

Եուրա Մովսիսեանը առաջին գոլը խփեց ԱՄՆ-ի ֆուտպոլի ուժեղագոյն լիգայի ընթացիկ առաջնութիւնում:

Հայ յարձակուողը իր թիմի՝ «Ռէյալ Սոլթ Լայքի» կազմում մասնակցեց «Պորտլենդ Տայմբերսի» հետ արտագնայ խաղին:

Եուրա Մովսիսեանը 58-րդ րոպէին գրաւելով մրցակցի դարպասը, կրկնապատկեց հաշիւը: Սակայն հիւրերին չի յաջողուեց պահպանել երկու գնդակի առաւելութիւնը եւ խաղն ավարտուեց ոչ-ոքի՝ 2:2:

Երեք տուրից յետոյ «Ռէյալ Սոլթ Լայքի» վաստակել է 5 միաւոր եւ այժմ զբաղեցնում է 6-րդ տեղը: Յաջորդ խաղը թիմը կ'անցկացնի Ապրիլի 3-ին, «Սպորտինգ Կանգաս Սիթիի» հետ:

Յիշեցնենք, որ Եուրա Մովսիսեանն այս տարուայ ձմեռան է Մոսկուայի «Սպարտակից» տեղափոխուել ԱՄՆ: Ի դէպ, Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասեանը նրան չի հրաւիրել թիմ՝ Մարտի 25-ին Բելառուսի ընտրանու հետ կայանալիք ընկերական հանդիպմանը պատրաստուելու համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ՝ ՌՈՒՄԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԻ ԳԱԲԱԹԱԿԻՐ

Հայաստանի ծանրորդները յաջող հանդէս եկան Կազանում այսօր ավարտուած ծանրամարտի «Ռուսիոյ նախագահի գաւաթի» խաղարկութիւնում:

Նախ Հոփսիսիմէ Խուրշուդեանն իրեն հաւասարը չունեցաւ գերծանր քաշային կանանց պայքարում: Նա երկամարտում ցոյց տուեց 246 կգ (110+136) արդիւնք եւ առաջ անցաւ ռուսաստանցիներ՝ Լիայան Մախիեանովայից (228 կգ) եւ Եկատերինա Յուսովոյից (216 կգ):

Գերազանց հանդէս եկաւ նաեւ մեր գերծանր քաշային Ռուբէն Ալեքսանեանը: Նա պոկում վարժութիւնում բարձրացրել է 189 կգ ծանրաձողը, հրում վարժութիւնում՝ 241 կգ-ը, եւ երկամարտի 430 կգ արդիւնքով զբաղեցրել է առաջին տեղը: Յաջորդ երկու հորիզոնականները զբաղեցրել են հունգարացի Պետեր Նադը (421 կգ) եւ չեխ Իրժի Օրսագը (414 կգ):

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՉԿԱՐՈՂԱՅԱԲ ԱՆԱԿՆԿԱԼԻ ԲԵՐԵԼ ԱՆԻՇ ԳԻՐԻՒՆ

Մոսկուայում շարունակուող շախմատի յաւակնորդների մրցաշարում կայացան 8-րդ տուրի պարտիաները:

Լեւոն Արոնեանը սպիտակներով մրցեց Անիշ Գիրիի հետ, որը մինչեւ այդ ոչ-ոքի էր ավարտել իր բոլոր հանդիպումները: Հոլանդացի շախմատիստն այս անգամ էլ զգոյշ մարտավարութիւն ընտրեց եւ հիմնականում խաղում էր կէս միաւորի համար:

Լեւոն Արոնեանը չնայած դիրքային առաւելութիւն ունէր, սակայն չկարողացաւ այն վերածել նիւթականի, ուստի մօտ 4 ժամ պայքարից յետոյ խաղաղութեամբ բաժանուեց մրցակցից:

ՄՈՒՐԻՆԵՆՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔԵԼ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵՂԻ» ՀԵՏ

Լոնտոնի «Չելսի-ից» հեռացուած Ժոզէ Մուրինեոն նախնական պայմանագիր է կնքել «Մանչեսթեր Եունայթեդի» հետ: Այս համաձայնագիրը վերջնական չէ, սակայն անգլիական ակումբը ստիպուած կը լինի զգալի գումար վճարել պորտուգալացի մասնագէտին, եթէ յետ կանգնի որոշումից:



Եթէ պայմանագիրը չկնքուի մինչեւ Մայիսի 1-ը, Մուրինեոն կը ստանայ 6.5 միլիոն եւրօ, չկնքուի մինչեւ Յունիսի 1-ը, ապա ակումբը ստիպուած կը լինի վճարել 13 միլիոն եւրօ: Եթէ մարզիչը փոխի որոշումը, ապա նա ստիպուած կը լինի փոխհատուցում վճարել ակումբին:

ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ «ԼԵՍԹԵՐԻ» ԽՆԴԻՐԸ ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻՑ ԴՈՒՐՍ ՉՄՆԱԼՆ ԷՐ

Անգլիական Պրեմիեր լիգայի սենսացիոն առաջատար «Լեսթերի» գլխավոր մարզիչ Կլաուդիօ Ռանյերին պատմել է, թէ իր թիմի առջեւ ինչ խնդիր է դրուած եղել առաջնութիւնից առաջ:



«Առաջնութիւնը մօտենում է ավարտին. հիմա ցանկանում եմ տեսնել, թէ ինչպէս կը վազեն իմ ձիերը: Մրցաշրջանից առաջ մեր խնդիրն ուժեղագոյններ լիգայից դուրս չմնալն էր: Այժմ մեր մասին խօսում են ամբողջ աշխարհում», - խտալացի մասնագէտի խօսքը մէջբերում է Talksport-ը:

Յիշեցնենք, որ Պրեմիեր լիգայի 31-րդ տուրից յետոյ «Լեսթերն» ունի 66 միաւոր եւ 8 միաւոր առաջ է անցել երկրորդ տեղում գտնուող «Տոտենհեմից», որը մէկ խաղ պակաս է անցկացրել: Լաւագոյն եռեակը եզրափակող «Արսենալը» հաւաքել է 55 միաւոր:

ՆԵՅՄԱՐԸ ՏՈՒԳԱՆՈՒԵԼ Է 46 ՄԻԼԻՈՆ ԵՐՈՅՈՎ

«Բարսելոնայի» յարձակուող Նէյմարը Բրազիլիայում մեղաւոր է ճանաչուել 2012-2014 թուականներին ֆինանսական խարդախութեան եւ հարկերից խուսափելու համար, հաղորդում է Goal.com-ը:

Պրազիլիայի Սան Պաուլու քաղաքի դաշնային դատարանը մեղաւոր է ճանաչել Նէյմարին եւ տուգանել է 46 միլիոն եւրոյով:

Ֆուտպոլիստն ունի դատարանի որոշումը բողոքարկելու իրաւունք: 2015թ. Սեպտեմբերին պրազիլական դատարանը սառեցրել էր Նէյմարի ֆինանսական ակտիւները: Նէյմարն ու նրա ընտանիքը չի ընդունում մեղքը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՁԻԳՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ ԵՆ ԴՈՊԻՆԳՆԵՐԻՑ

Հայաստանի հրաձիգները մեղքոյի ու մի կապուած ոչ մի խնդիր չունեն: Մամուլի ասուլիսին ասաց Հայաստանի հրաձգութեան հաւաքականի գլխավոր մարզիչ Սեդրակ Նիկողոսեանը:

«Մենք մարզիկների համար աչքի դեղ օգտագործելիս անգամ նախապէս հարցնում ենք մասնագէտներին, արդեօք այն արգելուած դեղամիջոց է, թէ՛ ոչ: Մեր հրաձիգները աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններում ենթարկուել են դոպինգ ստուգման: Ոչ մէկի մօտ դրական արդիւնք չի եղել, եւ չի էլ լինի: Դա բացառուում է» - ասաց նա: Փորձառու մասնագէտն անդրադարձաւ նաեւ մարզաձեւի գլխավոր խնդիրներին: Նա նշեց, որ դրանք երկուսն են՝

Ֆինանսաւորումը եւ մարզիկների գէնքերն արտասահման տեղափոխելը: Խօսելով մեր հրաձիգների 2016 թուականի օլիմպիական խաղերին մասնակցելու հնարաւորութիւններին մասին, Սեդրակ Նիկողոսեանն ասաց հետեւեալը. «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէի գլխավոր քարտուղար Հրաչեայ Ռոստոմեանը զբաղուած է հրաձգութեան սպիտակ քարտ ստանալու հարցերով: Եթէ Հայաստանին նման քարտ տրամադրուի, ապա Հրաչիկ Բաբայեանը կը մասնակցի Ռիօ-2016-ի խաղերին»:

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 21-Ապրիլ 19**
 Կեանքդ շատ կրնաս սիրել եւ լաւ օրեր տեսնել, եթէ լաւատեսութեամբ նայիս հարցերուն: Անձ մը քեզ փորձութեամբ մատնել պիտի ուզէ, մի ընդառաջեր ունէ առաջարկի եթէ տրամաբանական չթուիք ըլլալ: Ընտանիքիդ նկատմամբ անտարբեր մի գտնուիր: Բախտաւոր թիւերդ են: 9,14,27,30,33

ՑՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
 Գործատէրդ խոր մտահոգութիւն պիտի յայտնէ քեզի գործատէրիին մէջ պատահած դէպքի մը առնչութեամբ: Անկեղծ գտնուիր եւ իրաւունք պաշտպանէ: Զաւակներուդ համար երբեք զբաղ մի ըլլար, միշտ ժամանակ անցուր հետերնին: Բախտաւոր թիւերդ են: 8,11,19,29,31

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
 Ուրիշներու ապրելակերպով բնաւ մի հետաքրքրուիր եւ մի փորձեր անոնց նմանիլ: Դուն քեզ բարձր պահելով՝ պատուած կ'ըլլաս ընտանիքդ: Հարց մը հոգիիդ վրայ կը ճնշէ եւ կ'անհանգստացնէ քեզ, համբերէ եւ շուտով ճարը պիտի գտնես: Բախտաւոր թիւերդ են: 4,8,12,24,29

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Եշմարտութիւն խօսելէ բնաւ մի վախճար, մանաւանդ երբ հարցը կը վերաբերի նկարագրիդ մասին: Ինքզինքդ մի հեռացներ շրջանակէդ, որովհետեւ կը կարծես թէ սիրուած չես: Հեռախօսի միջոցով շատ ուրախ լուր մը պիտի ստանաս: Բախտաւոր թիւերդ են: 10,15,24,32,35

ԱՌԻԻԾ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Ծովեզերեայ վայրեր արձակուրդի երթալ շատ կը սիրես եւ հոն հոգերդ մոռնալով՝ կ'ընկղմիս տարբեր աշխարհի մը մէջ: Դժկամութիւն մի յայտներ երբ օգնութիւնդ խնդրուի: Կեանքիդ սխալ իրագործումներուդ համար մի ընդվզիր, փորձէ գանոնք շտկել: Բախտաւոր թիւերդ են: 1,8,11,24,31

ԿՈՅԱ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Աշխատեղիիդ մէջ մի տարուիր ուրիշներու բամբասանքներով, կեղծուածքի գործիդ վրայ: Ժամանակդ կը սպառես անարժէք բաներով, արդիւնաբեր ըլլալու համար՝ աւելի լաւ մտածէ կառուցածներուդ վրայ: Արգիլուած բաներէ հեռու մնացիր: Բախտաւոր թիւերդ են: 7,15,24,28,34

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Բարեկամներուդ գէշ օրինակին մի հետեւիր, սխալ ընտրութիւններ մի ընէր եւ անունդ մի արեր: Նեղուած անձի մը հետ պիտի հաշտուիս այս շաբաթ: Գիտնալով որ յանցաւոր ես, պիտի ուրանաս եւ յանցանքդ ուրիշի վրայ պիտի նետես: Բախտաւոր թիւերդ են: 14,20,28,29,33

ԿԱՐԻԾ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Ուրիշները մեղադրելը գէշ սովորութիւն ըրած ես եւ յաճախ տանդ մէջ նեղութեանդ պատճառ: Զգացական կապ մը պիտի ստեղծուի բու եւ անձի մը միջեւ որ բոլոր կեանքիդ ընթացքը պիտի փոխէ: Մեծ ամբոխի մը մէջ անակնկալի մը պիտի հանդիպիս: Բախտաւոր թիւերդ են: 9,11,13,24,25

ԱՂԵՂՆԱԲՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
 Կարգ մը անզգոյշ արարքներովդ՝ դուն քեզի համար մեծ ծուղակ մը կը փորես: Ինչ որ ալ ըլլայ ընտանեկան պարագաներդ, միշտ ուրախութեամբ կը դիմագրաւես գանոնք՝ յոյս ներշնչելով ընտանիքիդ անդամներուն: Դիւրաւ բարկացող մի ըլլար: Բախտաւոր թիւերդ են: 2,15,25,26,30

ԱՅԾԵՂՋԻԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
 Մարդոց սխալ արարքները եւ մարդկային չափանիշները աղտոտելը մեծ նիւթ կ'ըլլայ քեզի եւ նեղութիւն կը պատճառէ: Զաւակներդ միշտ խրատ եւ լաւ թելադրանքներ ըրէ անոնց: Շատ համբերող ես եւ զգացումներդ զսպող: Բախտաւոր թիւերդ են: 7,12,19,36,31

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 18**
 Յաճախ թոյլ կու տաս որ ժխտական ուժեր պատճառ դառնան բարկութեանդ եւ անտրամադրութեանդ: Փոխարէնը վստահ եւ հաւատա՝ դուն քեզի: Երեւակայութեանդ մէջի պատկերները շուտով իրականութեան պիտի վերածուին: Ուրախ եղիր: Բախտաւոր թիւերդ են: 5,17,23,34,35

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
 Թերեւս կարգ մը հարցերու նկատմամբ ըմբռնուող սահմանափակ ըլլայ, սակայն երբեք մի ամչնար անկեղծօրէն դուն քեզ արտայայտելու: Լսող սիրտ մը ունիս եւ բոլորի գաղտնիքները կրնաս պահել առանց բամբասելու: Զգուշացիր արկածէ մը: Բախտաւոր թիւերդ են: 4,12,24,25,35

Ի ՏԵՐ ՅԱՆԳԱԲ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՎԻՍԿՈՊՈՍ ԿԻՉԻՐԵԱՆԸ

ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տեղեկացուել է, որ մարտի 18-ին՝ կեսնքի 90-րդ տարում, վախճանուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Կիզիրեանը:



Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Կիզիրեանը (աւագանի անունը՝ Զաւէն) ծնուել է 1926 թ. Յուլիսի 15-ին, Դամասկոսում: Նախնական կրթութիւնն ստացել է տեղի Ազգային թարգմանչաց վարժարանում, փոքր տարիքից երգել է եկեղեցու դպրաց դասում:

1940 թ. Դամասկոսի Կաթողիկոսական փոխանորդ Գերաշնորհ Տ. Եփրեմ արքեպիսկոպոս Տոհմունու միջնորդութեամբ ընդունուել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեմանք:

1944 թ. Յուլիսի 11-ին, ձեռնադրուել է արքեպիսկոպոս Տոհմունու, ձեռնադրուել է սարկաւազ:

1947 թ., աւարտելով դպրեմանքի ուսումնառութեան եօթամեայ շրջանը, ձեռնադրուել է Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլադեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ:

1947-51 թթ. դասաւանդել է դպրեմանքում եւ Մեսրոպեան նախկրթարանում՝ միաժամանակ վարելով մի շարք վարչական պաշտօններ:

1951 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի արտօնութեամբ եւ Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի հրաւերով հովուական ծառայութեան է մեկնել ԱՄՆ:

1951-81 թթ. պաշտօնավարել է ԱՄՆ Արեւելեան թեմի Նիւ Եորքի Ս. Խաչ, Լիւիզիանայի Նիւ Ջերսիի Ս. Աստուածածին, Մասաչուսէթս նահանգի Ուտորի Ս. Փրկիչ, Սաութֆիլդ Միչիգանի Ս. Յովհաննէս, Ֆիլադելֆիայի Ուիլյամսթրիթի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, Մասաչուսէթս նահանգի Քեմբրիջի Ս. Երրորդութիւն եւ կարճ ժամանակով Գանատայի Թորոնթօ քաղաքի Ս. Երրորդութիւն եկեղեցիներում: ԱՄՆ Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորոնթօ արքեպիսկոպոս Մանուկեանի կողմից մէկ տարի ժամկէտով կոչուել է Նիւ Եորքի Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցու լուսարարապետի պաշտօնին:

1958 թ. Ապրիլին ստացել է մանաւոր վարդապետութեան աստիճան՝ ձեռնադրուելով ԱՄՆ Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Գալֆայեանի:

1966 թ. ծայրագոյն վարդա-

պետութեան աստիճան է ստացել ձեռնադրուելով ԱՄՆ Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկեանի:

1963-65 թթ. ստանձնել է ԱՄՆ Արեւելեան թեմի առաջնորդական փոխանորդութիւնը: Պաշտօնի հանգամանքով վարել է «Հայաստանեայց եկեղեցի» թերթի խմբագրութիւնը եւ թեմի կիրակնօրեայ դպրոցների տեսչութիւնը: Հովուական պաշտօններին աւելցնելով, աշխատակցել է ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմի Հայ եկեղեցու Երիտասարդաց կազմակերպութեան, Արմինիան Գարդիլըն ամսաթերթին:

1961-68 թթ. իր ծառայութիւնն է բերել ԱՄՆ Արեւելեան թեմի Դպրաց դասերի ընկերակցութեան կենտրոնական վարչութեանը՝ որպէս խորհրդական եւ ատենապետ, ինչպէս նաեւ 1963-67 թթ. թեմական խորհրդին:

1982 թ. Փետրուար 14-ին, ձեռնադրուելով Ամենայն Հայոց Վազգէն Ա Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրուել է եպիսկոպոս:

1982 թ. Ապրիլին նշանակուել է Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ:

1993 թ. Յունուարին Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի կողմից արժանացել է արքութեան տիտղոսի:

Անգլիայում, որպէս առաջնորդ եւ հայրապետական պատուիրակ, Հայ եկեղեցին ներկայացրել է Քէնթրքերիի արքեպիսկոպոսութիւնում, մասնակցել է միջկեղեցական ժողովների եւ հաւաքների, ինչպէս նաեւ Անգլիկան եկեղեցու Լամբերթի ժողովին:

12 տարի նախագահել է Անգլիայի Արեւելեան Ուղղափառ Հայ, Ղպտի, Ասորի, Եթովպական եւ Հնդկ Մալաբար եկեղեցիների խորհուրդը:

2000 թ. Հոկտեմբերին առողջական պատճառներով հրաժարուել է Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդի պարտականութիւններից եւ հանգստի կոչուել:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ
 Մեր թերթի ընթերցողներէն Տիրա վարուած Գրաճեան փոխան ծաղկեպսակի \$50 տոյար կը նուիրէ «Մասիս»ին, հանգուցեալ Վիգէն Կիլիկիացի Արքեպիսկոպոսի մահուան քառասունքին առթիւ:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

ՄԱՅԱՑԱԾ Է ԱՐՈՒԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱԴՐՈՐ ԳՈՐԾԻՉ ՎԻԼԵՆ ՉԱՐՉՕՂԵԱՆ

82 տարեկանին մահացած է գեղարուեստական ղեկավար, Հայաստանի արուեստի վաստակավոր գործիչ Վիլեն Վարդգէսի Չարչօղլեան: Լուրը փոխանցած են Ալ. Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու բաժինէն:

1958 թուականին, աւարտելով Երեւանի կոմիտասի անուան պետական երաժշտանոցը, Վ. Չարչօղլեան սկսած է աշխատել Ալ. Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնին մէջ՝ որպէս սիմֆոնիք նուագախումբի հիմնական խմբավար: 1982ին Վ. Չարչօղլեան նոյն թատրոնին մէջ աշխատած է իբրեւ գեղարուեստական ղեկավար: Տարիներ շարունակ բարձր մակարդակով ղեկավարած է թատրոնի

խաղացանկային ներկայացումները, մասնակցած է ձայնասփիւռի եւ պատկերասփիւռի համար կատարուած ձայնագրութիւններուն:

Վ. Չարչօղլեանի գլխավորութեամբ սիմֆոնիք նուագախումբի մենակատարներու խումբը մեծ յաջողութեամբ հանրութեան ներկայացած է Միացեալ Նահանգներու, Գանատայի, Սուրիոյ, Լիբանանի եւ այլ երկիրներու մէջ: Երկար տարիներ աշխատած է նաեւ Յ. Պարոնեանի անուան երաժշտական կատակերգական պետական թատրոնին մէջ՝ որպէս գլխավոր ղեկավար: Տասնամեակներ շարունակ իր մասնագիտական հմտութիւնները փոխանցած է նաեւ երիտասարդ երաժիշտներուն՝ նպաստելով հայկական, ինչպէս նաեւ համաշխարհային դասական երաժշտարուեստի զարգացման ու հանրահռչակման:

ԴԺՈՒՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Շարունակուած էջ 6-էն

խուսափելի է, ուրեմն հաւանաբար ճիշդ կ'ըլլայ այդ մշակոյթին լեզուն եւ իւրաքանչիւր թիւնները կրող չիջողութեան իրեր պահել որպէս ապագայ սերունդներու յղումի կէտ: Իսկ եթէ մշակոյթը շիջումէ փրկելու առիթը կայ տակաւին, ուրեմն պէտք է համայնքները մղել զայն վերակենդանացնելու նախաձեռնող մօտեցումներ որդեգրելու: Հակառակ որ մշակոյթ մը շատ մը տարրերէ կը բաղկանայ, Տոքթ. Միլիորինոն եւ ներկաները համաձայնեցան որ լեզուն անոնց մէջէն կարեւորագոյնն է՝ ըլլայ ապրող, շնչող կամ մեռած: Ան նշեց որ Լիբանանի եւ Սուրիոյ հայերու պարագային պէտք է մոռնալ թէ զանազան տեսակի համայնքներ կան, տարբեր պատմութիւններով, ինքնութիւններով եւ բարբառներով:

2011-ին երբ Սուրիոյ մէջ ըմբոստութիւններ սկսան, Տոքթ. Միլիորինոն ներկաներուն խոստովանեցաւ թէ գալիքի նկատմամբ չարագուշակ նախազգացում ունէր: Ան Սուրիոյ հայ համայնքի գոյատեւումին ուղղուած լուրջ սպառնալիք մը կանխատեսեց: Ըստ իրեն այս ըմբոստութիւններուն մէջ հայերուն դերը չնչին է. բացի սկզբնական փուլի անհատական բնոյթի

բացառութիւններէն, անոնք մաս չեն կազմեր այս զարգացումներուն: Այս ըմբոստութիւնները իրականութեան մէջ սպառնալիք են համայնքներու շահերուն, շատ բան ունին կորսնցնելիք: Հետեւաբար ակնատես կ'ըլլանք այն փաստին որ մեծ թիւով հայեր կը հեռանան Սուրիայէն, հակառակ համայնքը պահպանելու ջանքերուն: Այս իրավիճակը շատ չի տարբերի 1975-էն մինչեւ 1990 տեւող Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին հայերու վիճակէն: Այդ ժամանակամիջոցին հայերը որդեգրած էին «գրական չէզոքութիւն» կեցուածքը՝ մերժելով կողմնակալութիւնը, բայց միեւնոյն ժամանակ խաղաղութեան բանակցութիւններուն մասնակցութեան պատրաստակամութիւն յայտնելով: Այս սուհանդերձ, որպէս ճնշումի միջոց, հայերը թիրախ դարձան յարձակումներու, որոնք կը նպատակադրէին գիրենք փաղանգաւորներու կողմը մղել: Հայ համայնքը այս ճնշումին կրցաւ դիմադրել: Սակայն Սուրիոյ մէջ կացութիւնը տարբեր է, տրուած ըլլալով որ հոն հայ համայնքը ճգնաժամի մը պարագային միաւորուելու համար մէկ տեղ կեդրոնացած չէ եւ շօշափելի քաղաքական ուժ մը չի ներկայացներ:

ԾԻՅԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Շարունակուած էջ 7-էն

նոյն քաղաքականութիւնը «Սատանան մեր մէջ» վէպով շատ յաջող կը նկարագրէ 1948-ին թուրք պետութեան կողմէ սպաննուած վիպագիր Սապահատին Ալի:

1944-ին Ստալինկրատի ազատագրումէն ետք Նացիստներու թուրանականները ձերբակալող, Կէստափոյի կողմէ մարգուած ոստիկաններու ձեռքով տանջանքներու ենթարկող Հանրապետականներու վարչութիւնը, դեռ 1945-ին, ցուրտ պատերազմէն ալ առաջ, կրկին շահագործեց գանտնք: Այս անգամ ազգայնականներու ձեռքով կը ճնշէր բանուորներու արհմիութիւնները,

համալսարաններու ուսանողութեան եւ ձախակողմեան գաղափարախօսութեան:

Հանրապետական խորունկ իշխանութիւնը, իբրեւ թէ ընդդիմադիր «Տէմոքրատ» կուսակցութեան հետ միասնաբար դրդեցին կրօնի գործօնը:

Այդ պատճառաւ ալ պէտք է զարմանալ պարոն Պայքալի եւ պարոն Էրտողանի խորունկ բարեկամութեան:

Հիթլեր, ինչպէս որ փորձանք եղաւ մարդկութեան գլխուն, իբրեւ գործիք շահագործուած ճիշատականութիւնն ալ անհակելի, անսանձելի դարձած ու փորձանքի վերածուած է:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ Յ.Մ.Ս-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄ

Շարունակուած էջ 16-էն

յատուկ խօսք կ'ուղղեմ խումբի պատասխանատու Վահէ Աջապահ-եանին, մարզական պատասխանատուներ Յովիկ Ռեզեանին եւ Յարութ Կուտէշեանի, մարզական խորհրդական Գալուստ Տէրտէրեանին, գանձապահ Կարօ Լաջինեանին եւ հաշուապահ Յովիկ Լաջինեանին:

Կարելի՞ է մշտնջենալ խումբի տարած յաղթանակներն ու ստացած բաժակները:

Փաստորինայի մէջ կազմակերպուած մրցաշարքին երկու տարի յաջորդաբար եղած ենք երրորդ դիրքի վրայ: Իսկ 2015ի մրցաշարքին եղանք երկրորդ դիրքի վրայ: 2016ին Ամերիկեան, Անգլիական եւ այլ օտար խումբերու դէմ ունեցած մեր խաղերով արձանագրած ենք ամենամեծ թիւով կոլեր, հանդիսանալով առաջնակարգը՝ այդ խումբերու մէջ ու տիրանալով բարձր գնահատանքի, ֆուտպոլասէր հասարակութեան կողմէ:

Հայերու ապագան Միջին Արեւելքի մէջ անյուսադրիչ կը թուի, այս իմաստով Տոքթ. Միլիորինոն արտայայտեց ապագայի հանդէպ ունեցած իր յուսերստեղծութիւնը: Երբ իրեն հարցուցին ապագային Սուրիան որպէս հաւանական քաղաքական միացեալ ուժ միաւորուելու կարելիութեան մասին իր կարծիքը,

Ի՞նչ են խումբի հետագայ ծրագիրները:

Հ.Մ.Ս-ի հիմնադրութեան 95ամեակի առթիւ ունինք պատուոյ երեկոյ եւ խրատականք: Այս առթիւ խումբը պիտի ճամբորդէ Գանատա, որպէսզի մասնակցի Գանատայի Հ.Մ.Ս-ի եւ այլ խումբերու մասնակցութեամբ կազմակերպուած մրցաշարքերուն:

2018ին խումբը պիտի մասնակցի համահայկական խաղերուն, որոնք տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ:

Ի՞նչ խորհուրդ կու տաք մեր խումբի անդամներուն:

Խորհուրդ կու տամ մեր անդամներուն հետեւիլ փորձերուն, որպէսզի խումբը հզօրանայ եւ հասնի բարձր դիրքի ու տիրանայ յաղթանակը խորհրդանշող բաժակներու: Այսպիսով արդարացուցած կ'ըլլան իրենց վրայ դրուած յոյսերը եւ իրականացուցած՝ Հ.Մ.Ս-ի հիմնադիրներու երազը:

Հարցազրոյցը վարեց ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

բը, բան մը որ վստահաբար կարելոր անդրադարձ պիտի ունենայ հայ համայնքներու գոյատեւումին, Տոքթ. Միլիորինոն պատասխանեց թէ տակաւին այսպիսի կանխագուշակութիւններ ընելը կարելի չէ, ուրեմն կացութիւնը մտավախութեամբ ընկալելը խելացի մօտեցում մը պիտի ըլլար:

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel: ----- Email: -----

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆՐԱԲԱԽԱՔ

ԹՐՔԱԿԱՆ ԲԻՊԱՏՈՍԱՐԱՆ

6300 Wilshire Blvd., Los Angeles / Crescent Heights

ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ, ԺԱՄԸ 1-ԻՆ



ՀԱՆՐԱԿԱՌՔՈՎ
ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋՈՑ՝
ԿԷՍՕՐՈՒԱՆ ԺԱՄԸ 12ԻՆ

ՄԵԿՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԱՅՐԵՐ

ԿԼԵՆՏԷՅԼ	ՎԵՆ ՆԱՅՍ	ՆՈՐԹ ՀԻԼՁ
ՍԱՆԹԱ ԱՆԱ	ԹԱՀԱՆԿԱ	ՊԸՐՊԵՆՔ
ՓԱՍԱՏԻՆԱ	ԷՆՄԻՆՕ	ՆՈՐԹ ՀՈՒՎՈՒՏ
ՄՈՆԹԵՊԵԼԼՕ	ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ	ՀՈՒՎՈՒՏ

WWW.RALLYFORJUSTICE.ORG | 1(877)477-2559

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

